№ 291 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1910 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 291

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւն բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.



(№ 42[illegible]) 1441. 5—[illegible]

### ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

### ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցեն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցեն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

---

Սրանով մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում այն բոլոր անձանց, հաստատութիւններին և ընկերութիւններին, որոնք հեռագիրներով, նամակներով և թէ անձամբ իրանց ցաւակցութիւնն են յայտնել մեզ

**ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ԵՂԲԱՅՐ**

**ԱԹԱՆԱՍԻ**

մահով մեզ հասած ծանր և անմոռանալի վշտի առթիւ։

ԵՂԲԱՅՐՔ **ԺԱՄՀԱՐԵԱՆՆԵՐ**

1444. 1—1

---

Դեկտեմբերի 27-ին, լոյս երկուշաբթի գիշերը, ծանր և երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց

**Եւգենիա Գասպարեան ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑԸ,**

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին և բարեկամներին հանգուցեալի զաւակները՝ եղբայրը՝ Գրիգոր Գասպարեան Նահապետեանց, սկեսուրը՝ Եղիսաբէթ Առաքելեան Վարդազարեանց և տէգրը՝ Փիլիպպոս Յակոբեան Վարդազարեանց։

Ամրիծքը տեղի կունենայ ամսիս 20-ին, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7-ին, Орловская № 11. յուղարկաւորութիւնը ամսիս 30-ին, հինգշաբթի, առաւօտեան ժամը 10-ին դէպի Ջգրաշէնի եկեղեցին և պատարագից յետոյ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1445. 1 1

---

→ ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ←

### ԹԱՏՐՈՆ Ե. Բ. ՋԱՆՓՈԼԱԴԵԱՆԻ

Երևանի նախկին ակումբի շինութիւնը՝ հիմնական վերաշինութեամբ, յարմարեցված է յատկապէս թատրոնի համար։ Առանձին պատուէրով բերված է բոլորովին նոր, շքեղ դեկորացիա։ Կան բուտաֆոր, ռեկվիզիտ և ամեն յարմարութիւններ։

Պ. պ. սիրողները կարող են դիմել.
Въ гор. Эривань, Театръ ДЖАНПОЛАДОВА.
Тифлисъ, Контора „Энергія“. Пушкинск. № 3.

(Հ. Հ.) (առ.) 1404. 15—2

---

Ցանկանալով կարելիութիւն տուած լինել սակաւ միջոց ունեցող անձերին եւ համեմատաբար էժան գնով ծխելու ԱՄԵՆ ՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ,

**Ա. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ**

**ՖԱԲՐԻԿԱՆ**

**ԲԱՑ Է ԹՈՂԵԼ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ**

**„ԼԷՎ“ 20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.**

„ԼԷՎ“ պապիրոսները այնքան ԼԱՒ են ամեն մի կողմից, որ անկարելի է մտածել, թէ որևէ մէկը, եթէ փորձել է այդ պապիրոսները, մշտական չը ծխէ դրանց, որպէս

**ԱՄԵՆԱԼԱՒ ՊԱՊԻՐՈՍ**

**ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ**

**ՆՈՅՆԱՐԺԷՔ ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻՑ։**

(Հ. ու. կ.) առ. 1428. 10—2

---

### Թիֆլիսի Ժողովարան

Չորեքշաբթի, դեկտեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 8½-ին

Յօգուտ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ և ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

կայանալու է՝ I ներկայացում

**ԿԱՐՄԻՐ ԲՐԻԿ**

Վօդ. 1 գործ. Թարգմ. Մնակեանի

Մասնակցում են հայ բեմի դերասան-դերասանուհիներից տ. տ. Զարեհ, Յասմիկ, պ. պ. Միրզոյեան, Աւետեան և Լաքա։

II

**ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ**

Երեկոյթի բաժնում, Ս. Քափանակեանը մթութեան մէջ կարտասանէ ռուսերէն՝

**ԱԳՌԱՒԸ**

Պօէմա Էդգար Պօ-ի.

Գրական-երաժշտական բաժնում մասնակցում են յայտնի դաշնակահար պ. Տիգրանեան, ջութակահար Վիլշաու, դերասան. տ. Մայսուրեան, պ. Աւմենեան, երաժիշտ պ. Ս. Մելիքեան։ Վերջինիս ղեկավարութեամբ Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը կերգէ քառաձայն զանազան երգեր։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Միութեան գրասենեակում՝ Вельяминовская № 8. երեկոյեան ժամը 5—8-ը, իսկ ներկայացման օրը ժողովարանում։

առ. (ա.օ.) 1443. 2—2

---

### Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, դեկտեմբերի 31-ին

**ՆՈՐ ՏԱՐՎԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

պ. պ. անդամների և կանդիդատների համար, իրանց ընտանիքներով հանդերձ, տեղի կունենայ ընդհանուր ընթրիք, իւրաքանչիւրից 1 ր. վճարով առանց գինու և գակուսկայի։

Նուագում է զինուորական երաժշտախումբը և սազանդարները։

(29, 30) առ. 1447. 2—1

---

### ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհուրդը յայտնում է ի գիտութիւն պ. պ. անդամների, որ ուրբաթ, յունվարի 7-ին, 1911 թւին, երեկոյեան ժամը 9-ին

նշանակված է

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

կանդիդատներ առաջարկված անձանց քուէարկելու համար։

(առ.) 1448. 1—1

---

## ԱՆԳԼԻԱ, ԿՈՎԿԱՍ, ՀՆԴԿԱՍՏԱՆ

Մենք հաղորդել էինք այն հսկայական երկաթուղու մասին, որ դիտաւորութիւն կայ շինել Լամանշի ափերից մինչև Հնդկական Ովկիանոսի ափերը և միացնել Անգլիան անընդհատ գծով Հնդկաստանի հետ։

Այդ երկաթուղին կոչված է խոշոր դեր կատարելու համաշխարհային երթևեկութեան և ապրանքների փոխանակութեան գործում։

Մասնաւորապէս մեր երկիրը, Կովկասը, մի ահագին գերազանցութիւն է ստանում, դառնալով հաղորդակցութեան մի խոշոր հանգոյց և ստանալով այն առաւելութիւնը, որից նա զուրկ էր դարեր շարունակ։

Արդարև, Կովկասը մի քանի տարուց յետոյ կապված կը լինի համայն աշխարհի հետ թէ դէպի հիւսիս ու հարաւ և թէ դէպի արևելք և արևմուտք։

Մենք համակրութեամբ վերաբերվեցինք հնդկական երկաթուղագծի առաջարկին և ողջունեցինք նրան։

Մայրաքաղաքի մամուլը ենթարկեց այդ առաջարկը մեծ քննադատութեան և վիճաբանութեան։

Մոսկվայի վաճառականութեան մի ազդեցիկ մասը նկատեց այդ երկաթուղու մէջ վտանգ ռուսական ապրանքների վաճառահանման համար և երկիւղ յայտնեց, թէ արդեօք բանալով խողովակ անգլիական ապրանքների դիւրացրած հոսանքի համար դէպի արևելք, չէ փակվում շուկան Մոսկվայի Լօձի և ուրիշ գործարանների ապրանքների համար։

Դա սահմանափակ տեսակէտ էր և ոչ այնքան հիմնաւոր, ինչպէս թւում էր առաջին հայեացքից։ Անգլիական ապրանքները աւելի էժան գներով, ծովային ճանապարհներով և այժմ հասնում են հարաւային երկիրները։ Մինչդեռ ինքը Ռուսաստանն է հէնց գլխաւոր զրկվածը ճանապարհներից և ուրեմն դիւրացրած հաղորդակցութիւններից։

Պետերբուրգի մամուլն էլ երկար վիճաբանութեան մէջ մտաւ։ Հակառակ խօսողները այն առարկութիւնն էին հանդէս գնում, թէ հնդկական երկաթուղու անմիջական օգուտները միայն ենթադրական են, մինչդեռ Ռուսաստանի համար ներկայումս աններելի է զբաղվել արկածախնդրական ծրագիրներով և գործերով։ Մի քանիսն էլ կասկածներ էին յայտնում, թէ արդեօք հնդկական երկաթուղին չէ կրկնում մանջուրական երկաթուղու օրինակը և դատապարտում անելիք ծախքերը ապարդիւն վատնումի։

Կառավարութիւնը մինչև այժմ լուռ էր։ Միայն յայտնի էր, որ նա հաւանութիւն է տուել երկաթուղու ծրագրին։

Այժմ նա դրական քայլ է արել։

Նա առաջարկել է խնդիրը մինիստրների խորհրդի քննութեան։

Ներկայումս մինիստրների խորհրդի անդամների ձեռքին է գտնվում յատուկ գրութիւն այդ խնդրի մասին։

Երկաթուղային գիծը անուանված է Մեծ Հնդկական ուղի։

Պաշտօնական գրութիւնը, պատմելով թէ ինչպէս այդ հսկայական ուղիի միտքը վաղուց արծարծվում է եղել և թէ նա հաւանութիւն է գտած եղել դեռ Ալեքսանդր III կայսրի կողմից, ընդգծում է, որ այժմ միայն հնարաւոր եղաւ նրան առաջ մղել շնորհիւ երեք հանգամանքի՝

1) Անգլօ-ռուսական համաձայնութեան կայացումը, որ տեղի ունեցաւ 1907 թւին, վերացրեց այդ երկու պետութիւնների փոխադարձ հակառակութեան տարրերը,

2) Բաղդադի երկաթուղու շինութիւնը, որ ձեռնարկել է Գերմանիան, և այն պայմանները, որոնք ուղեկից են այդ գործին դրդում են ստեղծել հակակշիռ ուրիշ եղանակով և

3) Այն հանգամանքը, որ մարտ ամսին արդէն վերջացաւ ռուս-պարսկական համաձայնութեան ժամանակամիջոցը երկաթուղիներ շինելու վերաբերութեամբ։

Մենք չենք հաղորդի մանրամասնութիւններ պաշտօնական գրութեան բովանդակութեան մասին և կը բաւականանանք յայտնելով, որ նա անհրաժեշտ է համարում ձեռնարկութիւնը կազմակերպելու համար ակցիոներական գումար 20 միլիոն ռուբլի, իսկ զուտ արդիւնք տարեկան ստանում է մօտ 3 միլիոն։

Մեծ Հնդկական ուղին չափազանց կարևոր մի գիծ է, շատ օգտաւէտ Ռուսաստանի համար։ Եւ եթէ նա առաջին տարիները ցոյց չը տայ շօշափելի արդիւնք, օրից օր նա կը դառնայ աւելի ու աւելի գնահատելի և կը տայ անկասկածելի օգուտներ։

Ա. Քալանթար

## ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Ջարկենտ, 27 դեկտեմբերի

Առաւօտեան ժամը 9-ին կրկնվեց աստիճանաբար երկրաշարժը, որ տևեց 10 վայրկեան, աւելի զգալի և երկարատև նախկիններից։ (Հ. Գ.)

Կոպալ, 27 դեկտեմբերի

Թոյլ երկրաշարժը շարունակվում է համարեա ամեն օր։ Ուժգին էր այսօր առաւօտեան ժամը 9-ին։ (Հ. Գ.)

Վէրնի, 27 դեկտեմբերի

Առաւօտեան ժամը 9-ին զգացվեց ուժեղ ալիքանման երկրաշարժ, որ տևեց 15 վայրկեան։ Իսիկ-Կուլի ափի գիւղերի գլխաւոր տեղերը քանդվել են, որոնք են՝ Այտալ, Սազանովկա, Պրեօբրաժենսկոյէ։

Նահանգապետի նախագահութեամբ կազմվեց նպաստամատոյց յանձնաժողով։ Կարիքը մեծ է։ Աւելի են վնասվել Պիշպէկի ու Վէրնէնէ և Պրժէվալսկի գաւառները։ (Հ. Գ.)

## ԲՈՒԽԱՐԱՅԻ ՆՈՐ ԷՄԻՐԸ

—

Պետերբուրգ, 27 դեկտ. (Պաշտօնական)

Դեկտեմբերի 25-ին, մինիստրների խորհրդի նախագահը բուխարական էմիրից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Քաղաքական գործակալը Թիւրքեստանի գեներալ-նահանգապետի յանձնարարութեամբ տեղեկացրեց ինձ, որ կայսերական կառավարութիւնը անկեղծօրէն ցաւակցում է ինձ հասած անպատեհի վշտի առիթով: Խորապէս զգացված այդօրինակ բարձր ուշադրութիւնից, պարտականութիւնս եմ համարում ձեր բարձր գերազանցութեան յայտնել իմ սրտագին շնորհակալութիւնը: Խնդրում եմ ձեզ թոյլ տալ ինձ յուսալ, որ միեւնոյն ուշադրութիւնը կը լինի դէպի ինձ, ինչպիսին վայելում էր իմ հանգուցեալ ծնողը»:

Ի պատասխան դրա ստատս-սեկրէտար Ստոլիպինը հեռագրեց.

«Խնդրում եմ ձերդ բարձրութեանը ընդունել իմ անկեղծ շնորհաւորանքները Բարձրագոյն ուշադրութեան առիթով, որ Թագաւոր Կայսրը բարեհաճեց ցոյց տալ ձեզ, շնորհելով բարձրութեան տիտղոս, ձեր գահ բարձրանալու համար: Ցանկանալով ձեզ բաղդաւորութիւն և աջողութիւն երկար տարիներ Նորին Կայսերական Մեծութեան բարձր հովանաւորութեան ներքոյ, ես համոզված եմ, որ, անյողդողդ հետեւելով Կայսերական կառավարութեան բարեացակամ խորհուրդներին, ձերդ բարձրութիւնը ամեն ջանք գործ կը դնէ կատարելու ձեր առաջ դրված ծանր ու պատասխանատու խնդիրը, ձգտելով Բուխարայի բարեկեցութեանը և ձեր ժողովրդի զարգացմանը: (Հ. Գ.)

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլիս, 27 դեկտեմբերի

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրին ուղղած հարցապնդումից յետոյ պալատում, պատգամաւորների մեծ մասը դուրս գնաց դահլիճից: Կվօրումը չը կար: Չը նայած դրան, 128 պատգամաւորներ միաձայն վստահութիւն յայտնեցին մինիստրին:

Շէյխ Իդրիսէն Եմէնում գերի է վերցրել պալատի 3 արաբ պատգամաւորներին: (Հ. Գ.)

—

Լոնդոն, 27 դեկտեմբերի

«Թայմսին» հեռագրում են Սան-Եագոյից. «Հրդեհը ոչնչացրեց երկաթուղային շինութիւնները: Այրվեցին բոլոր ննջարան-վագոնները, ճաշարան-վագոնները, նախագահի սալոն վագոնը: Ենթադրում են թէ գործածող երկաթուղային բանւորներն են հրդեհել: Վնասը 150,000 ֆունտ է»: (Հ. Գ.)

—

Բեռլին, 27 դեկտեմբերի

Վօլֆի գործակալութեանը հեռագրում են Մեցից. «Լօրէն-Սպօրտատիւ» ընկերութիւնը, հակառակ ոստիկանութեան արգելքի, համերգ կազմակերպեց: Հասարակութիւնը ոստիկանական պաշտօնեայի առաջարկութեանը պատասխանեց ծիծաղով: Ոստիկանութիւնը ժողովը փակեց և դահլիճը մաքրեց: Յետոյ հազարաւոր ամբոխը «Կեցցէ Լօթարինգիան» աղաղակներով, մարսէլիեզ երգելով, անցաւ դէպի մարշալ Նէյի արձանը, ուր արտասանվեց ճառ, լսվեցին բացագանչութիւններ՝ «Կեցցէ՛ Ֆրանսիան»: Երբ ոստիկանութիւնը փորձեց ցրվել ամբոխը, վերջինս ընդունեց սպառնական դիրք: Կարգը վերականգնվեց զինւորական պահակախմբի օգնութեամբ: Ձերբակալվեցին երկու մարդ:

Ծպտեալ կերպով տեղումս գտնվող պարսից էկս-շահը յայտնեց իր խօսակցին, որ նրա կատարած ճանապարհորդութիւնը Եւրոպայում զուրկ է քաղաքական ստուերից և միայն բժշկվելու նպատակով է. Նա տեսակցութիւն չէ ունեցել ոչ մի բարձրաստիճան անձի հետ, ցանկանում է հայրենիքի բարօրութիւնը, հեռու է Պարսկաստանի հանգստութիւնը խախտելու մտքից: Լրագրական այն տեղեկութիւնը թէ Շիբենկօն ռուսական դեսպանատան անունից շնորհաւորեց էկս-շահին, սխալ է: (Հ. Գ.)

—

Վիէննա, 27 դեկտեմբերի

Կազմակերպվեց գործունեայ կաբինէտ. մինիստր-նախագահ Բինէրտ, ներքին գործերի մինիստր կոմս Վիկենբուրգ, լուսաւորութեան՝ Շտիւրգկ, արդարադատութեան՝ Հօխէնբուրգէր, ֆինանսների՝ Մէյէր, առեւտրի Վէյսկիրխնէր, հասարակական աշխատանքների՝ Մարեկ, ճանապարհների հաղորդակցութեան՝ Գլէմբինսկի, երկրագործութեան՝ Ցէնկերման, ազգային պաշտպանութեան՝ Գէօրգի, Գալիցիայի համար մինիստր՝ Ֆօն-Զալեսկի: (Հ. Գ.)

Վիէննա, 27 դեկտեմբերի

Ռուսաց դեսպանատունը աւստրիական արտաքին գործերի մինիստրութիւնից ստացաւ հետեւեալ բացատրութիւնը Օստրավի քարածխային շրջանում տեղի ունեցած դէպքերի մասին. «Տարվայ սկզբից մինչև դեկտեմբերի կէսերը այդ շրջանում կատարվեցին 19 սպանութիւններ, 3,124 մահափորձեր, 5496 փորձեր օտարի սեփականութեան դէմ, իրականացան 781 յանցանքներ: Հասարակական ապահովութեան այդօրինակ ուժեղ խախտումը դրդեց կառավարութեանը սկզբում ուժեղացնել պաշտպանութիւնը 300 ժանդարմներով, յետոյ մտցնել զէնք կրելու աւելի խիստ կանոններ, վերջապէս ստուգել անցագրերը: Ինչպէս յայտնի է, ռուսահպատակների անցագրերը պէտք է վաւերացվեն աւստրիական հիւպատոսարանում: Մինչև ստուգութիւնը Օստրավի շրջանում կային 418 ռուսներ, գլխաւորապէս անբարեյոյս, ի թիւս որոնց 85 հրէաներ: Մինչև ստուգութիւնն սկսելը, 253 հոգի ինքնակամ հեռացան, եօթ հոգի Աւստրիայից արտաքսվեցին դատարանով, եօթ հոգի ուղարկեցին արտասահման վերադառնալու թոյլտուութեամբ, ստանալով ուղղված անցագրեր, 95 հոգու հրամայված է ձեռք բերել պատշաճ անցաթղթեր, հակառակ դէպքում սպառնալիք յայտնվեց ուժով աքսորել նրանց Աւստրիայից, 56 հոգու, որոնք վաղուց ապրում են, շրջանում և միանգամայն բարեյոյս են, թոյլատրվեց մշտապէս ապրել Աւստրիայում: Արտաքսումը գործադրվել է նաև գերմանական, ունգարական և նոյնիսկ աւստրիական ազգութիւններին պատկանող անձանց վերաբերմամբ: Պրագայի ռուսաց դեսպան Ժուկօվսկին, որ գործը քննեց, դեռ հրոզութիւնը երևան չէ հանել: (Հ. Գ.)

—

Վիէննա, 27 դեկտեմբերի

Լրագիրները յուսահատութեամբ են վերաբերվում նոր մինիստրութեան ընդունակութեան, մատնանշելով նրա բիւրօկրատիկ բնաւորութիւնը: (Հ. Գ.)

—

Մոսկվա, 27 դեկտեմբերի

Բացվեց կոկորդի և ականջի հիւանդութիւնների մասնագէտների համառուսական համագումարը: Ներկայ են 170 բժիշկներ: Նախագահում է Սիմենովսկին: (Հ. Գ.)

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ղարասուբազար, 21 դեկտեմբերի

Վեհափառ Կաթողիկոսի մահվան գոյժը ստացվեց այստեղ դեկտ. 12-ին: Նոյն օրը երեկոյեան կատարվեց առաջին հոգեհանգիստը: Հետևեալ օրը ծխական դպրոցում պարապմունքներ չեղան ի նշան սուգի և աշ.-աշակերտուհիները ներկայ գտնվեցան պատարագին ու հոգեհանգստին:

Դեկտեմբերի 14-ին, ծխական դպրոցի մանկավարժական խորհուրդը «Մշակի» խմբագրութեան հեռագրով յայտնեց իր խորին վիշտը հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթողիկոսի մահվան առիթով: Հայ հասարակութիւնը նոյնպէս հեռագրով տեղակալի անունով յայտնեց իր վիշտը այդ առիթով, միաժամանակ խնդրելով յարգելի բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանին լինել հասարակութեան ներկայացուցիչը Վեհափառի թաղման և արտայայտել հասարակութեան անունից ցաւակցութիւն Էջմիածնի միաբանութեան:

Իսկ կիրակի օրը, դեկտ. 19-ին, հայոց եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ, որին մասնակցում էր երկսեռ քառաձայն խումբը, խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ հանգուցեալ Մատթէոս Բ. Կաթողիկոսի համար: Նախ քան հոգեհանգիստը Ա. քահ. Մեղնիկեանը դառնալով ժողովրդին իր և հօտի կողմից շնորհակալութիւն յայտնեց ներկայ գտնվող հայ-կաթօլիկ եղբայրներին, որոնք իրանց ներկայութեամբ պատուել էին հանգուցեալ Իզմիրլեանի յիշատակը և եկել էին մխիթարելու մեզ հասած մեծ կորուստի առիթով. ապա համառօտակի ուրուագծեց հանգուցեալի բեղմնաւոր գործունէութիւնը՝ մատնանշելով նրա կատարած դերը Կ. Պոլսի պատրիարքի պաշտօնում: Խօսելով նրա կարճատև կաթողիկոսութեան մասին, հայր Մ. շեշտեց այն բարենորոգչական ծրագիրները, որոնց իրագործելուն ձգտում էր հանգուցեալ Հովւապետը:

Յարութիւն Օրդուեանց

—

Շնող գիւղ, 15 դեկտեմբերի

Դեկտեմբերի 13-ին, գիւղի ծխական դպրոցի հոգաբարձութիւնը նորակառոյց դպրոցական շինութեան շինարար մասնաժողովի անդամների հետ ունեցաւ մի խորհրդակցական խառն ժողով, որի զբաղմունքի գլխաւոր առարկաներն էին՝ շինութեան գլուխ ծածկելը, որի պատերը միայն պատրաստ են և երկրորդ՝ պատերի վրա արված ծախքերի հաշիւները: Այս վերջինը պարզ կազմված չը լինելու պատճառով թողնվեց ուրիշ անգամվայ, որ և պէտք է պարզաբանել հասարակութեանը ներկայացնելու. Իսկ ինչ վերաբերում է առաջին հարցին, երկար խորհրդակցութիւնից յետոյ որոշվեց այժմեանից իսկ սկսել գլուխը ծածկելու աշխատանքները. Ինչ վերաբերում է պահանջվող փայտեղէն մասի և այլ նիւթերի համար անհրաժեշտ խոշոր ծախքերին, այդ մասին հոգաբարձութեան վրա պարտականութիւն դրվեց որոնելու, որքան հնար է, կողմնակի աղբիւրներ, այլապէս պատերը փչանալ են սկսում գլուխը առանց ծածկի մնալու պատճառով:

Վերջում հոգաբարձութիւնը որոշեց շնորհակալութիւն յայտնել Բագուի Հայոց Կուլտ. Միութեան, մեր դպրոցին նշանակած տարեկան 200 րուբլի նպաստի համար. արմավիրաբնակ շնողցի Հմ. Մաժինեանին իր հաշւով դպրոցի անունով «Հօրիզոն» և «Գիւղատնտես» թերթեր ուղարկելու համար. «Մշակի» և «Հովիտի» խմբագրութիւններին, իրանց թերթերը նուիրաբար նոյն դպրոցի անունով ուղարկելու համար:

Բ. Մկրտումեան

—

Մոզդոկ, 15 դեկտեմբերի

Կիրակի, դեկտեմբերի 12-ին, բացվեց Կ. Հ. Բ. Ընկ. Մոզդոկի «Հայրիկեան» գրադարան-ընթերցարանը: Տեղիս ս. Ստեփաննոս եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ, ներկայութեամբ երկսեռ խուռն բազմութեան, հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Մկրտիչ I կաթողիկոսի համար, որի ժամանակ Գէորգ ք. Փարեմուզեանը դրուատեց հանգուցեալի մարդասէր գործունէութիւնը, բնաբան առնելով «Լաւ է անունն բարի, քան զգանձ աշխարհի» և շեշտեց, որ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և՛ Մոզդոկում նրա անունը յաւերժացնելու համար հիմնվել և հիմնվում են բարենպատակ ձեռնարկութիւններ:

Եւ ապա եկեղեցական թափորը գնաց դպրոցական շէնքը, ուր ժամանակաւորապէս զետեղված է «Հայրիկեան» գրադ.-ընթերցարանը: Դպրոցի դահլիճում կայացաւ օրհնութիւնը, որից յետոյ երգեցիկ երկձայն խումբը երգեց մի քանի երգեր. ընդմիջումների ժամանակ ճառեր խօսվեցին: Խօսեց տեղիս վարչութեան անդամներից Դիլանեանը, յայտնելով, որ «Հայրիկեան» գր.-ընթերցարանը բացվում է շատ ողորմելի միջոցներով, նա ընդամենը ունի առձեռն դրամ 300 ր., որից 100 ր. պէտք է գործադրվի գր.-ընթերցարանի հարկաւոր պիտոյքների համար, աթոռներ և այլն: 100 ր. որոշված է գրքեր գնելու համար: Մնացել 100 ր. պարբերական թերթերին: Գր.-ընթերցարանը կըստանայ ռուսերէն և հայերէն թերթեր. „Русское Слово", „Русск. Богатство", „Нива", „Биржев. Вѣдомости", „Терск. Вѣд.", „Терекъ", «Մշակ», «Արօր», «Տարազ», «Աղբիւր», «Հասկեր», «Լոյս», «Մեր Կեանք», «Խաթաբալա» և «Արևելք»: Այնուհետև պարոնը յայտնեց, որ եղել են նուիրատուութիւններ թէ դրամական և թէ գրքեր. տիկին Վ. Քօլուբաշեանը նուիրել է 100 ր., Կար. Նաւասարդեանը՝ 100 ր., Կար. Շլթեանը զոհաբերել է իր գրադարանը, որը բաղկացած է 50 հատ գրքերից՝ 150 ր. արժողութեամբ:

Գրադ. ընթերցարանի մուտքը ամսական 15 կոպէկ է, գրադարանապետի պաշտօնը ձրիաբար յանձն է առել վարելու ուսուցիչ Տ. Տօնականեանը: Վերջը կարդացին երկու հեռագիրներ, որոնք ուղարկած էին Վլադիկավկազից: Դիլանեանից յետոյ՝ պարզ և դիւրըմբռնելի կերպով խօսեց ուսուցիչ Պ. Յովհաննիսեանը, գեղեցիկ օրինակներով բացատրեց գրադարան-ընթերցարանի օգտակարութիւնը: Հանդէսը վերջացաւ երգեցիկ խմբի «Հայր մերով» ժամը 2 ին: Հանդիսականները գոհ սրտով հեռացան:

Վարդան Վարդանեանց

## ՏՈՒԷՔ ԼԱՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՏԱՆՔ ԼԱՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

—

Շարունակ լրագիրներում կարդում եմ՝ թէ հայ ուսանողութիւնը անտարբեր է դէպի իր մայրենի լեզուն՝ թէ նա հայերէն չը գիտէ. «Նոյն իսկ բարձր դասարանի աշակերտները չեն կարողանում կանոնաւոր կերպով իրանց մտքերը արտայայտել, կամ մի բան գրել». Ենթադրենք թէ ճիշդ է, սակայն մի մոռանաք, որ «շատ ստացողից շատ են պահանջում, քչից՝ քիչ», ինչպէս ասում է ժողովրդական առածը, ինչ են տալիս աշակերտին ուսուցիչները, ահա այս է հետաքրքրականը: Անցնում է աշակերտը դասարանից-դասարան, նոյնիսկ լաւ թւանշաններով, բայց հասնում է վերջին դասարանը—հիասթափութիւն...

Աշակերտը պարզ գիտակցում է, որ բոլոր 4-ն ու 5-ը նրան կուրացրել են, որ նա այդ ժամանակամիջոցում ոչինչ չէ արել և ոչինչ չէ ստացել ուսուցչից բացի «թւանշաններից», սակայն ինչն է պատճառը. պատճառը շատ պարզ է, նախ՝ ամենաէականը, որ. չունենք պատրաստված ուսուցիչներ, մասնագէտներ, բ) թէև ունենք համալսարանաւարտ ուսուցիչներ, բայց անօգուտ, որովհետև օտար է նրանց հայերէն լեզուն, նրանք փոխանակ կոկելու, հարստացնելու աշակերտի լեզուի բառարանը, ընդհակառակը խառնում, աղաւաղում են: Օրինակ պատմում է ուսուցիչը դասը, յառուկ, նախօրօք ընտրած սահմանափակ բառերով—պահանջում է աշակերտից, որ նա էլ կրկնի իր ասած «ոչ հայերէն» բառերը և տերմինները, որովհետև աշակերտի արած շեղումները կամ անհասկանալի են թւում ուսուցչին կամ բոլորովին օտար են նրա ականջին. Իսկ այդպիսի ուսուցիչները, որոնք բառերի քիչ պաշար ունեն և հայերէնի հոտը նոր են առնում, հետևապէս անկարող են աւանդել ստանձնած առարկաները, թէկուզ մասնագէտներ էլ լինեն: Աշակերտը հայերէն խօսել, իր ուսուցչից այսպէս է սովորում: Գալով գրաւորին, պէտք է ասած, որ երկրորդական տեղ է բռնում մեր «հայ դպրոցներում»: Ամբողջ տարին աշակերտը մի քանի անգամ է գրում փոխադրութիւն կամ շարադրութիւն, այն էլ արձակուրդներին, որ սովորաբար ուսուցիչները անում են: «Գրեցէք ինչպէս էք անցկացնում Ծնունդը կամ Զատիկը». Էլ չեն մտածում՝ թէ աշակերտը նման շարադրութիւններ պէտք է ուսուցչի ներկայութեամբ, դասարանում գրէր և ոչ թէ տանը, այն էլ հանգստի ժամերին:

Թողնենք այդ, գանք ուղղված շարադրութիւններին. վերցնում ես աշակերտի տետրը և կարդում, տեսնում ես ջնջումներ, կողքերին հարցական նշաններ և ընդգծումներ... հարցնում ես ուսուցչին, ինչու էք պարոն ջնջել կամ ընդգծել—պատասխանում է—շատախօսելիս, երկարաբանութիւն չէր սիրում. պէտք է գրել կարճ, սեղմ, հակիրճ (այստեղ օրինակ է բերվում եւրոպական գրողներից) որպէսզի շատ ժամանակ չը կորցնեմ—ես ուրիշ գործեր էլ ունիմ». ցաւալին այն է, որ այդպիսի շարադրութիւններ դասարանում յաճախ չեն կարդացվում և չեն ուղղվում աշակերտների ներկայութեամբ. սակայն միակ ցաւը դա չէ, յանկարծ փոխվում է հայերէն լեզուի ուսուցիչը, գալիս է նորը:

Աշակերտի բանը բուրդ է. գրում է, չէ հաւանում, ասում է «ֆրազներ» են կամ լեզուն վատ է: Աշակերտը ապշած պատասխանում է. «Չէ՞ որ, այս ինչ ուսուցչի ժամանակ, ես ամենալաւ գրողներից մէկն էի, նա ինձ միշտ հաւանում էր և գովում իմ լեզուն»: Ուսուցիչը այս դէպքում ի հարկէ բարկանում է աշակերտի յանդգնութեան վրա և ասում է, ամեն մարդ իր էշն է քշում, նրա լաւը իմ վատին է համապատասխանում: Դու պէտք է թողնես քո «հինը» և ինձ հետևես: Աշակերտը ենթարկվում է: Անցնում է մի քանի ամիս, էլի է փոխվում և այսպէս անվերջ շարունակվում: Այնպէս որ աշակերտը, մինչև վերջին դասարան հասնելը, մի քանի ուսուցիչներից ազդեցութիւն է կրում, միայն հայոց լեզուից, ի հարկէ այսպիսի պարագաներում, աշակերտը ոչ թէ լեզու է սովորում, այլ կորցնում է իր գիտցածը և ստացվում այն պատկերը, ինչ ներկայացնում է այժմս աշակերտութիւնը:

Ա. Տ. Մարտիրոսեան

## ԲԱԳՈՒԻ ՀԱՄԱՐ ԲԵՐՎՈՂ ՇՕԼԼԱՐԻ ՋՐԻ ՄԱՍԻՆ

—

Բաւական երկար ժամանակ Բագու քաղաքի հայրերը, խօսելով Աջուրի, Սամուրի և Շօլլարի ջրերից մէկը քաղաք բերելու, վճռել են բերել վերջինը:

Երբ որ ձայնի մեծամասնութիւնը պատկանում է ազգաբնակութեան մի կողմին, որը իր յայտնի գլխաւորի բերանին է նայում և այս վերջինը ցանկանում է ունենալ մաքուր ջուր և ոչ թէ Թիֆլիսի միջով անցնող «կեղտոտ Կուրի ջուրը»,—ի հարկէ որ այսպէս էլ վճիռ կը կայանար:

Այս կեղտոտ համարվող ջուրը, որ մի ժամանակ ամբողջ Թիֆլիսի ժողովուրդը խմում էր և այն ժամանակ, ինչպէս յիշում եմ դեռ 50-ական թւերին, Կովկասի ամենառողջ ժողովուրդն էր: Ջուրը գետից ջրկիրներով բերում էին, անց էին կացնում քարի մէջ ածած ածուխով և գործ ածում: Հիմի էլ Թիֆլիսի նշաւոր մասը Կուրից է վերցնում: Չը նայած որ այժմ Թիֆլիսում գործ են ածում աղբիւրի ջուր, թէև ժողովուրդը առողջ է, բայց այնուամենայնիւ այն զուարթութիւնը և երեսների վարդանման գոյնն էլ չը կայ, ինչ որ Կուրի ջուրը խմելիս էր:

Շատերին է յայտնի, որ Շօլլարի ջուրը զարասու է, ճահիճներից է բղխում և վնասակար է թէ խմելու համար և թէ շոգեի կաթսաների համար և միևնոյն ժամանակ կարող են մեծ երաշտութիւն եղած տարիներում չորանալ այնպիսի ճահիճները և հետևաբար, քաղաքը կը մնայ առանց ջրի:

Հետազօտութեան համար հարիւր հազար է ծախսված մինչև այսօր և շատ միլիօններ պիտի ծախսէ, մինչև՝ ջուրը քաղաք հանելը, բայց, որքան ես ծանօթ եմ գործին, դեռ չեն հետազօտած Շօլլարի բոյսերը և հողը, որոնցից հասկանալի պիտի լինի ջրի յատկութիւնը. Երբ որ ջուրը բղխում է ոչ աւազից կամ քարից, այլ սև ճահիճներից, պիտի համարվի անպէտք գործածութեան համար: Ամենից պարզը և հասկանալին այն է, որ պէտք է քննել այն ժողովրդի առողջութիւնը և նրա կեանքի դրութիւնը, որը օգտվում է Շօլլարի ջրից և այն ժամանակ աւելորդ կը լինի լաբօրատօրիան և նրա վկայութիւնը:

Ի հարկէ, ամեն մի կովկասցի, թէ գետնական և թէ գահիկ կասէ, որ միշտ գետի ջուրը առողջարար է (բացի սար տեղերի աղբիւրներից, որ Բագուն իր միլիօններով չէ կարող ունենալ), այն էլ Կուրի պէս գետի ջուրը, որի ծագումը բոլորին յայտնի է, նաև յայտնի է թէ որքան օգտակար հանքային ջրեր են խառնվում նրան: Եւ այս ամենից յետոյ Կուրի ջուր բերելը, որի եթէ ամբողջ $^1/_4$-ականը բերեն քաղաքի պահանջը լրացնելու, այգիներ, բամբակի և հացի արտեր ջրելու, որ Բագուի շրջակայքում և առհասարակ գաւառում հարիւր հազար դեսեատինից աւելի ամայի լաւ հողեր կան, երբեք անգամ էժան կը նստէ, քան թէ Շօլլարի ճահիճների հոտած և ջերմ ու տենդ ընծայող ջուրը, որը իր վնասակար յատկութեամբ, ինչպէս վերև յիշած եմ, կարող է և մի գեղեցիկ օր ցամաքել:

Պարսկաստանում այնչափ այգիներ կան, որոնցից գոյացած մրգեղէնը, ինչպէս յայտնի է, արտահանվում է Ռուսաստան. այս այգիների մեծամասնութիւնը ջրվում են քեահրիզի ջրերով՝ հողի տակով հեռուից բերված, բայց Կովկասի ամենահարուստ քաղաքը (թողնենք կառավարութեան անուշադիր լինելը դէպի Կուրի և Արաքսի ջրերից օգուտ քաղելը) չէ ուզում այն անօգուտ, պարապ հոսող մեծ գետից առատ կերպով ջուր բերել, որ բացի քաղաքացիների բաւականութիւնը, բաժին տայ և գաւառի ազգաբնակութեան իր չոր, ցամաք դաշտերը պտղաբերելու, որ այս հողագործութիւնը գուցէ շատերին նաւթի հորերից աւելի օգուտներ կը տայ:

Վոլգա գետի վրա որքան քաղաքներ, գիւղեր և գործարաններ կան որոնց մէջ ամբողջ կեղտոտութիւն թափվում է բայց և այնպէս այս գետի ջուրը ամենաօգտաւէտն է համարվում խմելու:

Կուրի ջուրը նոյնպէս համարվում է օգտաւէտ: Վագոնով Բագուի փոկզալը հասնելուն պէս, ժողովուրդը թափվում է վրան որը փողով որը ծածուկ, որը ծանօթութեամբ և որը զօրութեամբ օգտվում են, նախադասելով այս ջուրը:

Շօլլարի ջուր բերող օտար ինժեները ջուրը կը բերէ, իր գրպանները կը լցնէ և կը հեռանայ ու կասէ առաջվայ քեհանայի նման, որը երեխային գետում, առանց միւռոնի, մկրտելուց յետոյ ասել է՝ «Կուզէ հայանայ, կուզէ թուրքանայ, միայն խաչքլըղըս բօլանայ»:

Սարգիս Թումանեանց

Ղարադաղ, 7 դեկտեմբերի

## Կ. Հ. ՀՐԱՏ. ԸՆԿ. ԱՆԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

«Մշակում» մի կարևոր հարց է ծեծվում, այդ՝ Կով. Հ. Հրատ. Ընկերութեան, այսպէս ասած, «անգործունէութիւնն» է:

Հրատ. Ընկ., որպէս կուլտուրական կարևոր մի ձեռնարկութիւն, պէտք է, որ աւելի ուշադրութեան արժանանար, քան այդ նկատվում է: Այն կուլտուրական դերը, որ կատարելու է մեր կեանքում Հրատ. Ընկ.-ը նոյնը չէ, ինչ որ Հայ Կուլտուրական, այլ (ինչպէս օրինակ, «Բարեգործ. Ընկ.») հիմնարկութիւններն են ստանձնել: Երկուսի համար էլ մենք ընտրում ենք որոշ թւով անձինք և ասում.—Ձեզ տալիս ենք իրաւունք գործելու այնպէս, ինչպէս դուք էք ցանկանում. Բարեգ. Ընկ.-ը օրինակ կարող է և պէտք է օգտվի այդ իրաւունքից ըստ իր հայեցողութեան, իսկ Հրատ. Ընկ.-ը առնուազն՝ ոչ միևնոյն չափով և ահա թէ ինչու:

Ամենքին յայտնի է, թէ ինչ խոշոր և պատասխանատու է այն դերը, որ ստանձնել են Հրատ. Ընկ. վարչութեան անդամները. հեշտ բան չէ մի՝ նաև կուլտուրապէս «քաղցած» մի ազգի զաւակների համար մտաւոր սնունդ մատակարարել: Այստեղից ինքնին բղխում է այն, թէ ինչ ընդունակութիւններով անհրաժեշտօրէն պէտք է օժտված լինեն այդ «ուսուցիչները», այս դէպքում՝ Հրատ. Ընկ. վարչութեան անդամները: Գիտենք նաև այն, թէ ովքեր են դրանք մեր կեանքում. բաւական է լոկ յիշատակել, որ Կ. Հ. Հ. Ընկ. վարչութեան անդամների մէջ կան այնպիսիները, որոնց գրական-գեղարուեստական, գիտական-փիլիսոփայական իմացութեան և ըմբռնողութեան միջինաչափ անգամ դժուար է որոշել... Շատերի համար контора-ի չորս պատն ու հաշւապահական գրքերն են կազմում այդ հորիզոնը, ուր պարփակվում է նրանց ամբողջ գիտութիւնը...

Դրանով չեմ ուզում ասած լինել, թէ թողած իր «ակադեմիստներին», սխալ ընտրութիւն ենք կատարել. ոչ մեր իրականութիւնն է տխուր, գուցէ այդպէս էլ պէտք է լինի:

Բայց ինչ չափով կարելի է մեծագոյն չարիքը փոքրացնել. ահա այդ հարցն է, որի շուրջը խորհրդածողները կը գան այն եզրակացութեան, որ իրաւացի չէ այդ կերպ դատապարտել Կ. Հ. Հ. Ընկ. վարչութեան անգործունէութիւնը. հեշտ բան չէ մեն մենակ՝ մարդկութեան մտաւոր գանձերից ընտրութիւն անել և դրանց հրատարակումով սերունդ կրթել. ահա այդտեղ է, որ մեղաւոր է թէ մամուլը և թէ ինտելիգենցիան և ցաւը նրանումն է, որ հէնց ինքը, այդ ինտելիգենցիան է լոկ պարսաւանք կարդում ընկ. «անգործունէութեան» առիթով:

Այդ կերպի պարսաւանքն ու քննադատութիւնը գին չունին և խնդիրը մնում է դարձեալ նոյնը. Հրատ. Ընկ., եթէ որոշումներ է կայացնում այնպէս, ինչպէս մինչև օրս, նա այդ կերպի պարսաւանքները լսելուց յետոյ աւելի ևս կը ջանայ իր որոշումները ի կատար ածել և ով իրաւունք կունենայ նրան արգելք հանդիսանալու։ Մարդիկ իրաւական հիմք ունեին։

Բայց արդեօք այդպէս պէտք է լինի։ Ոչ։ Իմ կարծիքով՝ Հրատ. Ընկ. վարչութեան անդամները, ովքեր էլ լինին, մեն-մենակ անկարող են իրանց կոչման համապատասխան բաւարար գործ կատարել և նպատակայարմար արդիւնք տալ, եթէ ամեն հարցում չը խնդրեն մեր մամուլի, ինտելիգենցիայի աջակցութիւնը։ Խօսքիս ամենալայն իմաստով, և մամուլն ու ինտելիգենցիան ևս իրաւունք չունին քննադատելու, մանաւանդ պարսաւելու Ընկ. գործերը, եթէ նոյն չափով չեն օգնել նրան։ Մեր ինտելիգենցիան, գիր և գրականութեան ծանօթ անձինք, միայն Թիֆլիսում չեն։ Միթէ վատ կը լինէր մամուլում յայտարարել հրատարակելիք գրքերի ցուցակներ, քննութեան առնել այն խնդիրը, թէ ինչպիսի երկերի հրատարակութեանը պէտք է առաջնութիւն տալ, քանի որ այնքան դժուարութեամբ ենք կարողանում մի գրքոյկ լոյս ընծայել։

Անհրաժեշտ է, որ Ընկերութիւնը նախ լոյս ընծայէ այն բոլոր ձեռագրերի ցանկը, որ ուղարկված են նրան հրատարակելու. անհրաժեշտ է նաև, Ընկերութեան որոշած հրատարակելիք երկերի ցուցակն ևս լոյս ընծայել, որ քննադատվեն հրապարակով. մի բան գուցէ և խիստ կարևոր, որ վրիպած կը լինի Թիֆլիսի մի խումբ ինտելիգենտների մասնաժողովում, այդ թերևս հնարաւոր կը լինի ուղղել՝ մամուլի մէջ հրապարակելով։ Մեր ինտելիգենտներից նրանք, որոնք գիտակ են եւրոպական գրականութեանը, դրանց վրա սրբազան պարտք կայ՝ արձագանք տալ այս հարցին և, ի նկատի ունենալով մեր իրականութիւնն ու զգացվող կարիքը, իրանց կողմից անհրաժեշտ գրքերի ցուցակներ առաջարկեն Ընկերութեան վարչութեանը։

Այդպիսով Հրատ. Ընկ. չէր որոշի չքնաղ Հոմերոսի հայերէն երրորդ հրատարակութիւնը տալ և Շոթա Ռուսթավէլիի երկը լոյս ընծայել այն իրաւունքով և կոպէկներով, որ այնքան թանգ են նստել մեզ վրա…

Եւ ինչ է իմ այս նամակի նիւթը. այն որ մենք այժմ ունենք Հրատ. Ընկ. և չը գիտենք ինչ հրատարակել. ճնշող է այս ամենը։

Սակայն, ծանօթ լինելով մեր գրական, այսպէս ասած մտաւոր կեանքին և դրա պահանջներին, թող ներվի ինձ այս խորհրդածութիւնը անելու։

Թէ անհատի և թէ ազգերի կուլտուրական առաջխաղացութեան գործում իրերի փիլիսոփայական ըմբռնողութիւնը—ընդհանուր զարգացման դաստիարակութեան հիմքն է կազմում։ Առաքինութիւն չը վերցնող հանգամանքը մոռացութեան է տրվել մեզանում, թէև յաւակնութիւն ունենք կուլտուրայի օղակները մաշելով՝ վերև բարձրանալ։

Եւ ահա նաև այդ խոշոր ու անհրաժեշտ կարիքն է, որ պէտք է բաւարարութիւն տայ Կ. Հ. Հ. Ընկ. վարչութիւնը։ Ռուսթավէլիի երկերը թող մնայ ապագային, հոգացէք անհրաժեշտ կարիքներ։ Սովորելու բան տուէք մեր սովորող սերընդին. տուէք նրան լուրջ գրուածքներ, գիտական, փիլիսոփայական բովանդակութեամբ գրքեր, դասագրքեր. վարձատրեցէք թարգմանիչներին և յանձնարարէք հայերէնի փոխադրելու այնպիսի երկեր, որոնցով սնվում է մեր երիտասարդութիւնը՝ սակայն իրաւամբ օտար լեզուով։ Այն ժամանակ էլ կարիք չէք զգալ ասելու, թէ՝ հայերէն գիրք չեն գնում, չեն կարդում, ախր ինչ գնեն, ինչ կարդան։ Վ. Ազատեան

## ԱՆՑԱՒ ՀԻՆ ՏԱՐԻՆ

Տարին վերջանում է։ Ինչպէս ամեն մարդ իր անհատական կեանքում կամ իր մասնաւոր զբաղմունքի մէջ ինքն իրան հաշիւ է ներկայացնում իր սեփական կեանքի մասին, նոյնը և մենք Նոր-Բայազէտի շրջանում գտնվողներս կարող ենք տալ մեր հասարակական կեանքի, տեղական խնդիրների վերաբերմամբ, ներկայացնելով ընթերցողների առաջ, թէ արդեօք ինչ տուեց մեզ հին տարին։

1910 թիւը մեր քաղաքի և գաւառի հասարակութեան համար ոչ մի մխիթարական բան չը ներկայացրեց. նա լի էր անպգին դժբաղդութիւններով, որոնցով համակվել էր մեր քաղաքի և գաւառի ժողովուրդը։ Մի փոքր յետադարձ հայեացք,—և դուք կը տեսնէք հին տարվայ արհաւիրքների մեծութիւնը՝ հասցրված մեր դժբաղդ հասարակութեան և գաւառի աղքատիկ բնակչութեան։

Հենց սկզբից, գարնանացանի միջոցին մեծապէս վնասվեցին մեր գաւառական ժողովրդի ցանքսերը. հեղեղները անբաւ վնասումներով ի չիք դարձրին նրա չարքաշ աշխատութիւնը… Մի փոքր անց, երբ զգալի կարիք կար անձրևների՝ երկինքը պղպղաց և շաբաթներով մի կաթիլ անձրև չը թափեց հանդերում, ուր երաշտից պապակել և թոշնել էին թէ ցանքսերը և թէ այլ բուսականութիւնը։ Մարդիկ թափորներով, օրհնանքներով, մատաղներով, աղօթքներով և լաց ու կոծով էին ջանում Աստծու սիրտը քաղցրացնել՝ անձրև հայցելու, իրանց սև օրը լուացնելու համար ապագայում։ Սակայն անցան մի շարք ամիսների երկարատև կիզիչ արևոտ օրերը և ցանքսերը այրվեցին արևի առաջ…

Այդ բաւական չէր. հունձի միջոցին դուրս եկան դաշտային մկները, կրծողների այլ երամակները, որոնք հորդաների նման ասպատակեցին հասուն արտերը, ուր լիքն ու հասուն հասկերը հնձեցին և իրանց բունը տարան՝ սոված թողնելով տէրերին…

Եւ միթէ կարծում էք դրանով բաւականացաւ հին տարին—հարկաւ ոչ։ Եկաւ աւերիչ խոլերան, որը մեծ զարզանդով անցաւ բոլորի ողնաշարի վրայով՝ սպառնալով լափել շատերի կեանքը, եթէ նրանք ձեռք չառնեն առողջապահական բոլոր միջոցները։ Սակայն նա, խոլերան, կամաց-կամաց հատ-հատ, մէջ ընդ մէջ տարաւ իր զոհերը ժողովրդական այլ և այլ շրջաններից, ուր կարծէք աննկատելի կերպով, առանց համաճարակի բնաւորութեան զոհ էին գնում այդ սոսկալի հիւանդութեան…

Դրանով էլ չը բաւականացած՝ բնութիւնը թափեց ժողովրդի գլխին նաև իր ահռելի արհաւիրքը, այսինքն ընկաւ անասնացաւը՝ տաւարի ժանտախտը՝ և հնձեց մեր գաւառացու թանգագին անասունները՝ մխկտացնելով նրանց տէրոջը, որ իրանց աչքի լոյսի չափ, իրանց անդրանիկ երեխայի պէս սիրում էին իրանց թև ու թիկունք համարված անասուններին… գոնէ սա վերջին հարուածը լինէր…

Այո դա վերջին բայց և սոսկալի հարուածն էր մեր ժողովրդի համար, որ տուեց մեզ այս ցաւագարութեամբ լի տարին… իսկ ժողովուրդը՝ անհասկանալի միամտութեամբ, հլու և խոնարհ ճակատագրի առաջ՝ անմռունչ կերպով տարաւ տարվայ այդ խաղերը և լացեց իր սև օրը սրտում միայն…

Իսկ դրանց հակառակ, դժբաղդ ժողովրդի վէրքերի վրա իբրև սպեղանի ինչ արեց քաղաքի գիտակից մասը, կամ արտօնեալ դասը կամ հենց նոյն իսկ քաղ. վարչութիւնը, որ տէր ու տիրական է միանգամայն համայնքի և քաղաքի հասարակութեան։ Դա էլ կարծեօք ոչինչ մխիթարական բան չարեց՝ յօգուտ տանջված և լքված ժողովրդի, որն իր բոլոր ակնկալութիւնները յաւակնութիւն ունի հայցելու այդ նոյն վարչութիւնից…

Նախ և առաջ պէտք է ասել, որ քաղ. վարչութեան անդամները թայֆաների բաժանված ոչ մի նոր հոսանք և ոչ մի նշանաւոր գործ չը կատարեցին՝ յանուն ժողովրդի շահերի։

Գործին աւելի մօտ անձինք—ստաշօստան և իր օգնականը—միմեանց հետ խռովված, քաղաքային և հասարակական գործերը երեսի վրա թողնված… Ծխ. հայոց ուսումնարանը պարտքի տակ խեղդված՝ փակվելու վտանգի առաջ է կանգնած… Հասարակական գրատուն-ընթերցարանը դատարկ, առանց գրքերի և ընթերցողների։ Բարեգ. Ընկերութիւնը մեռած՝ քայքայված (տեղական ճիւղը)։ «Գրագիտութիւն տարածող Ընկերութիւնը» անյայտ մնացած… Ուսումնարանի շէնքը կիսատ թողնված և այլ ազգային-հասարակական գործերը բարձի թողի արված։

Ասենք այդ բոլորի դիմաց գոնէ մարդիկ ապահով լինէին իրանց սեփական գործերի և աշխատութեան վերաբերմամբ։ Բայց… բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ այդ էլ այդպէս չէ։ Առևտուրը, արհեստը և այլ մասնաւոր անհատական ձեռնարկութիւնները և զբաղմունքները նոյնպէս աննպաստ պայմանների մէջ են գտնվում այս տարի և ոչ ոք ոչ մի կողմից մխիթարված չէ զգում իրան, այլ ամբողջ ժողովուրդը խրված է անհուն ցաւերի և հոգսերի մէջ, ծանրաբեռնված ընտանեկան ծանր կարիքներով…

Մնում է ասել, որ հին տարին, որը ոչինչ չը տուեց մեզ, ահա վերջացաւ, և թող վերջանան նաև մեր ժողովրդի միջից այս տարվայ ցաւերն ու դժբաղդութիւնները։

Անցաւ հին տարին։ Գ. Մինանեան

Նոր-Բայազէտ, 23 դեկտեմբերի

## ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԽՈՀԵՐ

Մերվ, 20 դեկտեմբերի

Անկեղծ խօսքի, անաչառ գործունէութեան վայր չէ Անդրկասպեան երկիրը։

Թղթակիցը, հասարակական գործիչը անհատներ են, որոնք հասարակական կեանքում դատապարտված են արհամարհանքի, ծաղրի, թշնամանքի։

Թղթակից ես՝ բոլորն էլ կը խորշեն քեզանից, պատերի տակ կծկված՝ կասկածելի հայեացքներով կը դիմեն քեզ ամբողջ ժամանակ և իրանց շրջանում քո հասցէին զանազան ածականներ տալով կը հանգստանան։

Շուրջդ ամայի է. չը կայ ձեռք բռնող, քեզ օգնող, ընկերակից. բոլորն էլ փախչում են քեզանից։

Կան բաւական թուով երիտասարդներ, որոնց կը պատահէք ամեն կիրակի եկեղեցու բակում։ Դրանք բոլորն էլ հագնված են վերջին տարազով, օսլայած շապիկներով ու ձեռնափայտերով։ Եւ դուք՝ գաւառական հասարակական գործիչդ՝ այդ մարդկանց տեսնելով ուրախանում էք, որ, ըստ երևոյթին, գտնվում են ձեզ հասկացող այնպիսի անձինք, որոնք հասարակական գործերում կը հանդիսանան ձեզ աջակցող էլեմենտներ։ Իսկ երբ մօտենում էք նրանց՝ աւելի մօտիկից շօշափելու, նրանց ներքինի հետ ծանօթանալու նպատակով, միանգամայն հիասթափվում էք։ Ճիշդ է, թէև դրսից օսլան է փայլում, բայց ներքուստ նոյն հոգով զառամեալներն են, որոնք իրանց անտարբերութեամբ կեանքը դարձրել են մի կարծր ու անզգայ ժայռ։

Մի յայտնէք, որ դուք հասարակական գործերով էք հետաքրքրվում, թէ չէ՝ իրանց տան դռները ամուր կը փակեն ձեր առաջ, տուն կը մտնեն՝ իրանց կնոջը պատուիրելով, որ ասեն ձեզ, թէ՝ «աղէն տանը չէ»։

Բաւական է, որ մի անգամ հասարակական տգեղ երևոյթներից մէկը յանձնէք լրագրութեան, և ահա արդէն ողջ քաղաքը ձեր թշնամին կը դառնայ։ Վարձու մարդկանցով ծեծել կը տան ձեզ, եթէ պաշտօն ունէք՝ որոգայթ լարելով վռնդել կը տան ձեզ ու ամեն միջոց գործ կը դնեն, որպէսզի շուտով փախչէք այդ վայրից։

Այո, ամենակարող է զզուելի «ես»-ը։

Քծնեցէք, կեղծեցէք, ստեցէք, թալանեցէք, զանազան միմոսութիւններով հաճոյացէք այս կամ այն պարոնին, որպէսզի ձեզ պատվեն, ասեն՝ խելօք էր, գործունեայ, ամենակարող. այնուհետև ձեզ համար չաղ պաշտօնը, արդիւնաւէտ գործը և փողաւոր աղջիկը պատրաստ են։

Թշուառ իրականութիւն։

Գրադարան-ընթերցարան չը կայ, սիրողների խումբը քայքայված է, խօսեցէք այդ բոլորի մասին, բուռն կերպով նետվեցէք գործի ասպարէզ, և ձեզ կը զգաք մենակ. իսկ հեռուից երիտասարդները ձեզ կը ծաղրեն։

Եթէ փող ունէք, թէկուզ արեան գնով ձեռք բերած, ապա ուրեմն մարդ էք։ Իսկ եթէ աղքատ ինտելիգենտ աշխատաւոր էք, թէկուզ գոհարներ էլ թափէք, ոսկեայ սարեր կանգնեցնէք դարձեալ «չարլատան» էք, «աֆերիստ», «գլուխ սաֆրող»։

Արտայայտեցէք որևէ կարծիք, թէկուզ ամենաէական խնդրի մասին ամենաշատը կարծէք, չեն լսի, որովհետև աղայական «ես»-ը թոյլ չի տայ, որ դրսից որևէ ուղղութիւն տուող լինի։

Թղթախաղի, գինեմոլութեան զեղխ ու շուայտ կեանքի համար, որքան կուզէք փող կայ. բայց գրադարան-ընթերցարանի, դպրոցի, թատրոնի, հայկական հրատարակութիւնների համար ձեռները երկինք են բարձրացնում։

Կանաչ սեղանների առաջ հարիւրանոցներ են պտտվում, բայց դպրոցը այս տարի վերածվեց թոշակային սիստեմի, իսկ շատ աղքատների միանգամայն մատչելի չէ հարուստների հետ հաւասար թոշակ վճարելը։

«Գրանդ-Օտէլ» և «Ֆրանսիա» հիւրանոցներում թէ ընտանիքաւորները և թէ ամուրիները ամեն գիշեր անխնայօրէն շռայլում են անգին գումարներ, իսկ միևնոյն ժամանակ Մերվի Հայ Կանանց Բարեգ. Ընկ. մանկական պարտէզը փակվեց նիւթական սղութեան պատճառով։

Եթէ ցանկանում էք ձեր անձնական բարօրութեան շէնքը կառուցանել, ապա հասարակական գործերի վերաբերմամբ ձեր անկեղծ ու լաւագոյն զգացումները խեղդեցէք, պապանձվեցէք, ապա թէ ոչ՝ աղաները կը կը պապանձեցնեն ձեզ հալածանքով և այլ հազար ու մի միջոցներով, որովհետև մարդիկ զուրկ են քաղաքացիական քաջութիւնից՝ հաշտվելու ձեր ասած ճշմարտութիւնների հետ և կամ գոնէ ձեզ հետ կռվելու ազնիւ ու բարոյական զէնքերով։

Եւ ամենացաւալին այն է, որ մեր տուած այս խարակտերիստիկան ոչ թէ յատուկ է Մերվի, այլ, շատ քիչ բացառութեամբ, Անդրկասպեան երկրի հայկական բոլոր գաղութների կեանքին և այդ կեանքում երևացող հասարակական իդէալական գործիչների դրութեանը… Sero.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ռուսաց Ծննդեան օրը, զինուորական տաճարում պատարագը մատուցեց հանդիսաւորութեամբ Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսը, ուղղափառ հոգևորական դասի հետ։ Ներկայ էին Փոխարքայի երկու օգնականները և այլ պաշտօնական անձինք։ Նոյն օրը Կովկասի Փոխարքային և կոմսուհի Ելիզավէտա Անդրէևնային այցելեց Ծնունդը շնորհաւորելու համար նորին բարձր սրբազնութիւնը, իսկ յետոյ կոմսը և կոմսուհին բարեհաճեցին փոխ-այցելութիւն տալ էկզարխին։ Ապա էկզարխին այցելեցին Փոխարքայի երկու օգնականները, պաշտօնական մարմինների, հասարակական և քաղաքային հաստատութիւնների ներկայացուցիչները, հոգևորականութիւնը և այլն։

◆ Այսօր Թիֆլիսի զինուորական-նահանգական դատարանում կը քննվի Մարտիրոսեան ամուսինների յայտնի գործը, որոնք մեղադրվում են բժ. Եփրեմ Աղամալեանին Մոսկովսկայա փողոցում սպանելու մէջ։

◆ Այս օրերս տեղական համարեա բոլոր օրաթերթերը յայտնեցին, թէ նահանգական ատեանը Պետական Դումայի անդամ Ջիւէրձէի ընտրութիւնը գտաւ կանոնաւոր։ Մինչդեռ «Կավ.»-ի ասելով, ատեանի մէջ պարզվել է, որ Ջիւէրձէն չէ ունեցել բնակարանային այնպիսի ցենզ, որի համաձայն քուէարկվէր իբրև ընտրող և որ, հետևաբար, իրաւունք չունենալով մասնակցել այդ ցենզով ընտրութիւններին իբրև ընտրող, նա չէր էլ կարող ընտրվել։ Սակայն նահանգական ատեանը աչքի թողի չարեց երկու հանգամանք. նախ որ Ջիւէրձէն հաստատվել է Պետական Դումայի մասնաժողովից, և երկրորդ որ ըստ օրէնքի Պ. Դ. անդամ ընտրվելուց յետոյ երևան հանված անճշտութիւնները քննելու էր ինքը Դուման։ Այս բոլորի հիման վրա ատեանը գտաւ, որ Ջիւէրձէի գործը ըստ էութեան նա անձեռնհաս է քննելու։

◆ Լոյս դեկտեմբերի 28-ի գիշերից Թիֆլիսում սկսեց տեղալ քուլա-քուլա ձիւն, որ, շարունակվելով հետևեալ օրը, սպիտակ սաւանով ծածկեց ամբողջ քաղաքը։ Պէտք է նկատել, որ այս տարի ձմեռը Թիֆլիսում շատ խիստ է։

◆ Յունվարի 1-ին, Ժողովրդեան Տանը պրոֆ. Ժուրակովսկին, Գվազավան և Հեպշտէյնը դասախօսութիւն կը կարդան Արցիբաշեվի «Սանին» գրքի մասին։ Հեպշտէյնը կը խօսէ յօգուտ, Գվազավան ընդդէմ, իսկ Ժուրակովսկին կը եզրափակէ։ Սկիզբը ցերեկով է։

◆ Շիրվանզադէի յոբելեանական մասնաժողովը որոշել է՝ 1) յոբելեանը կատարել 1911 թ. մայիսի 7-ին, 2) յոբելեանի առիթով հրատարակել յոբելեարի գրուածքներից «Ցաւագարը» ժողովրդական գներով, 3) տալ յոբելեանական ներկայացում, 4) ընտրել մի խմբագրական մասնաժողով՝ գնահատելու համար հայ գրողների այն յօդուածները, որոնք մտնելու են յոբելեանական ժողովածուի մէջ։

◆ Վերադարձաւ Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գործավարութիւնը իտալական կրկնակի հաշւապահութեամբ կը տարվի 1912 թւի յունվարի 1-ից։

◆ Թիֆլիսում բանջարեղէնը և մասամբ մրգեղէնը կանոնաւոր վաճառման հիմքերի վրա դնելու համար, մի խումբ գերմանացիներ կազմել են ընկերակցութիւն, որոնք և բանակցութիւն են սկսել Օրթաճալայի այգետէրերի հետ։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց Կարս քաղաքին, բաժանել իրան պատկանող ցանքսի համար պիտանի հողերը կանոնաւոր հողաբաժինների, իւրաքանչիւրը 6—15 դեսեատին, կապալով տալու համար։

◆ Ժանտախտի դէմ մաքառող Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը որոշել է Կայսերական բժշկական ինստիտուտին կից հիմնել 6 շաբաթական դասընթացքներ ջուրը հետազօտող, խոլերայի, ժանտախտի և բծաւոր տիֆի դիագնոզը որոշող և ախտահանիչ բժիշկների համար. նոյնպէս միջնորդութիւն յարուցել ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջ, որպէսզի այդ տեսակ դասընթացքներ բացվեն նաև Կազանի, Կիևի և Տօմսկի համալսարաններին կից։ Յիշեալ դասընթացքները, ուր ընդունվելու են միայն 40 բժիշկներ, տեղի կունենան 1911 թ. յունվարի 17-ից մինչև փետրվարի 26-ը։ Թիֆլիսի բժշկական մարմինների կողմից ուղարկվելու է մի կամ երկու բժիշկ։

◆ «Կօպէկ» ընկերութիւնը իշխանութիւնից թոյլտուութիւն է ստացել բանալ ապաստարան 30 հոգու համար։

◆ Երէկ քաղաքային տանը եղաւ տօնածառ հոգեկան-հիւանդների համար։

◆ Յունվարի 1-ին հանդիսաւոր պաշտօնական պատարագ կը մատուցվի զինուորական տաճարում։

◆ Կախէթիայի երկաթուղագծի կառուցման փողերը տալիս է ռուս-չինական բանկը, որ այժմ կոչվում է ռուս-ասիական։ Պայմանագիրը կապված է վրաց ազնուականութեան անունով. բաց են թողնված 400,000 րուբլու ակցիաներ։ Որոշված է գծի նախնական աշխատանքներին ձեռնարկել փետրվարից։

◆ Մեզ խնդրում են հաղորդել, որ իրաւաբան Գր. Ջամալեանը իր սիրալիր պատրաստակամութիւնն է յայտնել առանց որևէ վարձատրութեան իրաւաբանական օգնութիւն հասցնել ուսուցչական միութեան անդամներին։

# ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

### Ռօբերտ Ադելհէյմ

Դեկտեմբերի 27-ին կայացաւ Ադելհէյմի առաջին ներկայացումը։

Հանդիսականները շտապել էին լցնել վրաց ազնուականութեան թատրոնը։

Ադելհէյմը այս անգամ ծրագրել է խաղալ միայն երեք պիէս՝ «Պատիժ», «Համլէտ» և «Քին»։

Առաջին ներկայացման համար նա ընտրել էր Գէի «Պատիժ» պիէսը, որտեղ նա խաղում է Գօդդայի դերը մի առանձին հմտութեամբ։ Գօդդայի դերի կատարման մէջ Ադելհէյմը առաջինն է Ռուսաստանում։ Եւ ինչպէս՝ շնորհիւ Ադելհէյմի առանձնայատուկ խաղի «Պատիժ» պիէսը, ինքն ըստ ինքեան մի շատ հասարակ գրական գործ, ստացաւ նշանակութիւն և բեմ հանվեց Ռուսաստանի բոլոր մասերում,

Ադելհէյմ Գօդդայի դերը կատարել է 824 անգամ։

Նա այս անգամ էլ ունեցաւ կատարեալ աջողութիւն։ Գեղեցիկ կերպով երգեց ֆրանսերէն բօկալներ զանգի ներդաշնակութեամբ և երկու ռուսերէն ռօմանսներ։

Հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով վարձատրեց դերասանին։

Միւս դերակատարներից կարևոր է յիշատակել Կարենինային, որ բաւական աջող կատարեց Կէտի դերը։ Նա գիտէ մտնել դերի մէջ, ըմբռնել իր հերոսուհու հոգեբանութիւնը, համակվել նրա վշտով և տանջանքներով։ Նա իրան պահում է ազատ, խօսում է պարզ, բարձրաձայն, բայց յուզմունքի րօպէներում չափազանց աղաղակում է և խօսքերը խառնում։ Հասարակութիւնը հաւանեց նրա խաղը։

Միւսները նպաստում էին առաջին երկուսի խաղին։ Միրող

—

Երկուշաբթի, դեկտ. 21-ին, ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց Ալբերտ Լինդների տրագեդիան «Բարթուղիմէոսեան գիշերը» կամ «Արիւնազանգ հարսանիքը» անունով։

Այս պիէսան, որի մէջ գրեթէ բոլոր անձնաւորութիւնները կենտրոնական են, ինչպէս Եկատերինէ Մեդիչին, Կարլոս IX թագաւորը, Հենրիխ Նավարայի թագաւորը, Լոտարինգեան կարդինալը, Մարգարիտա Վալուա թագուհին, խաղացվեց մեծ աշխուժով և գրեթէ բոլոր դերակատարները հայթայթեցին հանդիսականներին էսթէտիկական հաճոյք։ Դերասաններ Մուրոմցէվ (Կարլոս IX) և Գրինէվ (Հենրիխ Նավարցին), դերասանուհիներ Զարօվա (Մարգարիտա Վալուա), Ագրինցէվա (Եկատերինէ Մեդիչի) փայլուն կերպով [illegible] իրանց դերերը։

## ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի բեմերի վրա թոյլատրված է խաղալ հայերէն՝ «Կանացի հաւատարմութիւն» 4 գործ. լեգենդան, հեղ. Ջանիկի։

◆ Վրաց Դրամատիկական ընկերութեան 30-ամեայ յոբելեանի տօնումը նշանակված է յունվարի 2-ին։

◆ Այսօր Արքունական թատրոնում երգիչ Տօմսկին իր բենեֆիսին դրել է «Տօսկա» յայտնի օպերան։

◆ Ժողովրդական Տանը հայ թատերասէրների խմբի հերթական ներկայացումը տեղի կունենայ յունվարի 2-ին։

◆ Դեկտ. 30-ին, Ժողովրդական Տանը կը կրկնվի «Ռուսալկա» օպերան։

# Մ Ա Մ Ո Ւ Լ

Թիւրքահայերի մէջ այժմ ամենից հրատապ խնդիրը, պատրիարքի ընտրութեան խնդիրն է։ Անցեալները մենք հաղորդեցինք մի լուր, քաղված Կ. Պօլսի թերթերից, թէ իբր Ազգ. Ժողովի կենտրոնի խմբակցութիւնը մտադիր է տեղապահ ընտրել Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունուն, իսկ պատրիարք՝ Բաբգէն եպիսկոպոս Կիւլէսերեանին։

Այդ առիթով Կահիրէի «Լուսաբեր-Արև» թերթի մէջ ծանօթ գրող Լ. Մկրտիչեան տպել է մի մեծ յօդուած, որից առաջ ենք բերում հետևեալ կտորները.

> Պատիւ չունիմ ճանչնալու արմաշական Բաբգէն եպիսկոպոսը, բայց ինծի կը թուի որ, ինչ ալ ըլլայ նորին գերապատուութեան անձնական արժանիքը, խոհեմութիւն չէ բնաւ տակաւին շատ երիտասարդ և տարիքի ու միտքի փորձառութիւններէ հարկաւորաբար զուրկ եկեղեցականի մը յանձնել ամբողջ Թիւրքահայոց ճակատագիրը։ Բաբգէն եպիսկ. քանի որ կեդրոնի խմբակցութեան ուշադրութիւնը հրաւիրեր է իր վրան, անշուշտ ունեցած ըլլալու է մասնաւոր յատկութիւններ և առաքինութիւններ, որով հաւանօրէն ապագային, երբ աւելի զարգանայ և յառաջդիմէ կեանքի դժնդակ պայքարին մէջ, լաւ թեկնածու մը նկատուի պատրիարքական աթոռին. բայց նորին գերապատուութիւնը այժմէն իսկ ընտրելի հռչակելու համար, պէտք կըլլայ որ իր վրայ տեսնենք ամենաբացառիկ կարողութիւններ, արտաքոյ կարգի վարչական տաղանդ։ Դժբաղդաբար այսօրինակ արտակարգ կարողութիւն մը լսուած չէ ցարդ Բաբգէն եպիսկոպոսի մասին և եթէ ունեցած ըլլար՝ ապահովաբար պիտի լսուէր։ Բայց քանի որ Բաբգէն եպիսկոպոս բարի համբաւ մը կը վայելէ՝ ասիկա ինքնին ցոյց կուտայ թէ նորին սրբազնութիւնը normal անձնաւորութիւն մըն է։ Եւ դժբաղդաբար մեր ժողովուրդին մէջ այնքան քիչ է normal ուղեղներու և ողջամիտ հանրային գործիչներու թիւը որ, երբ պատահմամբ այդպիսի յատկութիւններով օժտուած անձի մը կը հանդիպինք՝ անմիջապէս իր բուն արժանիքէն աւելի կը գնահատենք զանի և կը կարծենք տաղանդի մը և երբեմն իսկ հանճարի մը հանդէպ գտնուած ըլլալ։ Այս իրողութիւնը ակնյայտնի կը ցուցնէ մեր մտաւորական սնանկութիւնը վարչական տեսակէտով, զի արդարև մենք չենք և երբեք չենք կրցած ըլլալ վարչական normal կարողութիւններով օժտուած ցեղ մը, և մեր ցեղային տառապանքին դարաւոր, յաւերժական տառապանքին գլխաւոր պատճառը մեր վարչական ապիկարութիւնն է եղած։
>
> Բայց հիմա, որ Դաշնակցութեան յաւէտ աղետալի ամբոխավարութեամբը Թիւրքահայ ժողովուրդին ինքնուրոյն գոյութիւնը նկատելի տագնապ մը կանցնէ, տագնապ՝ որուն մէջ յոյժ չեզոքուած պատասխանատուութիւն մը ունեցաւ վարչական զէռօ մը, որպիսին է

Դուրեան սրբազան, մեր նուիրական պարտականութիւնն է ոչ միայն normal ուղեղի մը յանձնել պատրիարքական փափուկ պաշտօնը, այլև այնպիսի ուղեղի մը որ տարիներու փորձառութեամբ հասունցած և իր հասունութեան ապացոյցները գործնականապէս տուած ըլլայ։ Մեզի պէտք է մանաւանդ այնպիսի անձնաւորութիւն մը որ քաջութիւն, կամքի ոյժ ունենայ, շրջահայեաց և խոհեմ ըլլալով հանդերձ։

Ապա յօդուածագիրը իբրև միակ արժանաւոր թեկնածու առաջարկում է Պրուսայի առաջնորդ Յ. արք. Արշարունուն։

Արդ, ներկայիս մէջ փորձված normal միտք, ջիղ և կորով, իր խղճմտանքին առջև չը տկարանալու կարողութիւն ունեցող միակ եկեղեցական Պրուսայի առաջնորդ գերապատիւ Յովհ. արք. Արշարունին կը ներկայանայ։

Այս անձնաւորութիւնը թերևս միակն է մեր Թիւրքահայ եկեղեցականներուն մէջ, որ, ազանց որևէ «կուսակցութեան» պատկանած ըլլալու, սուր հոտառութիւն ունի կուսակցական մտայնութեան խորը թափանցելու, վտանգը տեսնելու և անոր դէմ զինուելու և կռուելու։

Անշուշտ ամբոխավարներու գործին չի գար Արշարունի սրբազանի՝ մեր ցեղին համար բացառիկ ձիրքերով օժտուած այդ անձնաւորութեան պատրիարք ընտրուիլը, և այս պատճառաւ «Ազատամարտ» այժմէն իսկ սկսած է պայքարել Արշարունի սրբազանին դէմ։

*

«Баку» թերթը խօսելով կաթողիկոսական ընտրելիների մասին և յայտնելով, որ «Русское Слово» թերթի թղթակցի ասելով, Դուրեան պատրիարքի նշանակութիւնը, իբրև կաթողիկոսական ընտրելու, խախտվել է, կցում է. «Յոյս ունենալ Թիւրքահայերի ձայների վրա, Դուրեանը հազիւ թէ կարող է, ինչպէս և Օրմանեանը, որ նախորդ ընտրութիւնների ժամանակ շատ կողմնակիցներ ունէր, բայց չէ վայելում մեծամասնութեան համակրութիւնը։

Ռուսաց հայերը առաջարկում են կանդիտատներ նշանակել Ռուսաստանի հայ եպիսկոպոսներից մէկին, պատճառաբանելով այդ որոշումը նրանով, որ Թիւրքահայ եպիսկոպոսներից ընտրված կաթողիկոսը շատ ժամանակ է գործ դնում իրան անծանօթ ռուսական օրէնքների ուսումնասիրութեան վրա։ Ռուսահայ կանդիտատներից անուանում են տեղապահ Սուրէնեան արքեպիսկոպոսին, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին, որ բարձր կրթութիւն ունի, Մեսրոպ եպիսկոպոսին, Բագրատ վ. Վարդազարեանցին, որ համալսարանական կրթութիւն ունի և Կաթողիկոսի դիւանապետ էր։ Սակայն, այդ կանդիդատներից ոչ մինը չունի կուսակիցների այնքան մեծ թիւ, որ իր կանդիդատութիւնը ապահովեալ համարէ։ Կ. Պոլսում լուրջ կանդիդատ կաթողիկոսական գահի համար համարվում է նախկին պատրիարք Օրմանեանը։ Յեղափոխութիւնից յետոյ Օրմանեանը հրաժարվեց, մեղադրվելով համակրութեան մէջ դէպի նախկին սուլթան Աբդիւլ-Համիդը, առաջադիմականների կողմից։ Այս օրերս, ինչպէս հաղորդում է „Рус. Слово"-ի թղթակիցը, Օրմանեանը կարողացաւ վերականգնել տալ իր համբաւը իր վրա բարդած մեղադրանքից»։

Ինչ հիմք ունի „Баку" թերթը ռուսահայերի մէջ արտայայտված մի քանի կարծիքներ համարելու իբրև որոշումն ռուսահայերի, չը գիտենք. յամենայն դէպս որևէ որոշումն չէ եղել և շատ էլ վաղաժամ է որևէ որոշումն կայացնելը։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 դեկտեմբերի

Այն ամենափոքր յարգանքի նշոյլն անգամ, որ Յովհաննէս Թումանեանը, իբրև բանաստեղծ, ունէր իմ աչքում, այսօր պէտք է անհետանայ, երբ նա այնքան անամօթաբար, այնքան ցածօրէն և ստորաքարշօրէն ուրանում է փաստեր, որոնք տեղի են ունեցել ահագին բազմութեան առաջ, խօսքեր, որ նա արտասանել է մօտ 80 պատգամաւորների առաջ։ Այսօր «Հորիզոնի» մէջ նա ուրանում է այդ բոլորը և ասում, որ ես սուտ եմ գրել, որ իբր նա չէ ասել, թէ Կարապետ եպիսկոպոս մտել է «Հորիզոնի» խմբագրատուն և ցաւ յայտնել, որ հայ ժողովուրդը նրան չէ գնահատել իբրև բանաստեղծի և այլն, իբր նա չէ ասել, թէ «Հորիզոնը» այդ խնդիրը դրել է հէնց իրա Կ. եպիսկոպոսի պատուի համար» և այլն և այլն։

Միայն ստախօսութեան և խուլիգանութեան տղմի մէջ թաւալված մարդը կարող է ուրանալ, հաշա ուտել այն խօսքերը, որ, ես կրկնում եմ, ասել է ահագին բազմութեան, մօտ 80 պատգամաւորների առաջ։ Եւ ինչ պէտք է մտածեն Յ. Թումանեանի մասին այդ պատգամաւորները, որոնք լսել են նրա ասածները։

Ես, ի հարկէ, չէի կարող Յ. Թումանեանի ասածները, իրար հակասող և իրար հերքող (որպիսի դրութեան մէջ ընկնում են միշտ ստախօսները), բառ առ բառ բերել, բայց թէ ես նրա ասածների բովանդակութիւնը ճշգրօրէն եմ արձանագրել «Մշակի» մէջ, դրան վկայ են Ա. Բաբեան, Յ. Խունունց, Կ. Խատիսեան, Մ. Եպիսկոպոսեան, Արտակ վարդապետ, Ա. Երիցեան, Լ. Սարգսեան, Բենիկ վ., Հ. Տէր-Միքայէլեան, Ա. Բալայեան և ուրիշ շատեր, որոնց անունները չեմ կարող յիշել այս րոպէին։ Թող դրանցից մինը դուրս գայ և ասէ, թէ Յ. Թումանեան չէ ասել այն խօսքերը, որ ես առաջ եմ բերել «Մշակի» մէջ։

Ամօթ, ամօթ Յ. Թումանեանին այդպիսի ստորաքարշ ուրացութեան համար։ Մենք սովոր էինք արդէն Յովհ. Թումանեանի ուրացութիւններին, կեղծաւորեալ և միտումաւոր ուրացութիւններին, տակտիկային, այն օրից, երբ նա, թողած բանաստեղծութիւնը կամեցաւ և «հրապարակախօս» լինել, բայց այդքան աշկարայ ուրացման և ստախօսութեան, խոստովանում ենք, նոյնիսկ Յ. Թումանեանին անընդունակ էինք համարում։

Եւ մենք բոլորովին կարհամարհէինք, լռութեան կը տայինք Յ. Թումանեանի խուլիգանական յարձակումները, եթէ նա իր խուլիգանութեան մէջ չաշխատէր գագաթնակէտին հասնել։ Տեսնում էք, ընթերցող, երբ «բանաստեղծ» Յ. Թումանեանը վեր կենայ և ճառեր արտասանէ, թէ հայ մամուլի այս կամ այն օրգանը յարձակումն է գործել Իզմիրլեանի վրա, հայհոյել է հայոց եկեղեցին կամ մի ուրիշ վատ գործ է կատարել ուստի և ինքը վրդովված է, նողկանք է զգում և այլն և այլն, և երբ դուք, մի այլ անձն վեր կենաք և ասէք, «բանաստեղծ» Թումանեան, եթէ դուք անկեղծ էք, եթէ, արդարև ձեր խիղճը վրդովված է և հարկ էք համարում նողկանք և զայրոյթ արտայայտել, ինչու չը վրդովվեցիք, երբ այս կամ այն թերթը աւելի վատ, աւելի խուլիգանական բաներ էր գրում նոյն անձանց մասին,—ոհ, ընթերցող, դուք այդ չանէք, որովհետև իսկոյն կը պոռան Թումանեանները. «Հա, դուք մեզ մատնում էք, դուք ուզում էք հասկացնել ուրիշներին, որ մենք համակրում ենք այդ թերթերին» և այլն, և այլն։ Ուրեմն, հայ թերթեր, հայ ընթերցողներ, երբէք, երբէք, ոչ մի բառ մի խօսէք, մի քննադատէք Թումանեանների և նմանների վարմունքը, որովհետև դուք դրանով կարող էք վնասել նրան։ Ոչ, Թումանեան, անցան այն ժամանակները, երբ այդ պարոնները անամօթաբար տարածում էին ձեր ընկերների հետ միասին, թէ Հ. Առաքելեան, Ալ. Քալանթար, Լ. Սարգսեան մատնել են ձեզ և ձեր ընկերներին, անցան այն ժամանակները, երբ չարերը կամենում էին հաւատացնել թէ հայ թերթերի և, գլխաւորապէս «Մշակի» շնորհիւ են ձեր ընկերները բանտարկվել։ Այժմ, երբ քննութեան գործն արդէն շատերին ծանօթ է դարձել, դուք և ձեր ընկերները մկան ծակն էք որոնում, որպէսզի ձեր զրպարտութիւնների ամօթից մտնէք այնտեղ։

Դուք և ձեր ընկերներ «հորիզոնականները», չէք խղճահարվում ներկայացուցիչ էք ուղարկում էջմիածին յանդիմանելու Իզմիրլեան Կաթողիկոսին իր բռնած ընթացքի համար, վրդովեցնում, յուզում նրան նոյն իսկ իր վերջին օրերին։ Իսկ նրա վախճանվելուց յետոյ վեր էք կենում կոկորդիլոսի արցունքներ թափում, գովաբանում ձեր գլուխը, թէ միայն դուք էիք, որ համակրում էիք նրան և չէիք վշտացնում։

Կեղծաւոր փարիսեցիներ, բաւական է, մերկացրէք ձեր դիմակը։ Անաչառ, անկողմնապահ և արդար պատմութիւնը հեռու չէ արտասանելու իր արդարադատ վճիռը և գամելու ձեզ անարգանքի սիւնին։

Իսկ ձեզ, Յ. Թումանեան, իմ խորին արհամարհանքը ձեր անամօթ ստախօսութեան համար։

Որպէսզի մի անգամ ընդ միշտ բացատրվի, թէ ով է ստախօսը, Թումանեանը թէ ես, առաջարկում եմ Յ. Թումանեանին պարզ, մէկին կերպով ասել, թէ ինչն եմ ես սխալ կամ սուտ գրել, և դիմել կամ պետական դատարանին կամ միջնորդ դատարանի, որի առաջ և կը հաստատվի վկաներով, թէ ով է մեզանից սուտ խօսողը։ Ուրեմն դիմեցէք դատարանի։

Հ. Առաքելեան

—

Հաղբատ, 20 դեկտեմբերի

Մեր խնամքին յանձնված Հաղբատի հայոց եկեղեցական ծխական երկդասեան երկսեռ դպրոցի օգտին ստացած ենք Թէջանի (Անդրկասպ. երկ.) հասարակութիւնից Լևոն Սարեանցի միջոցով հանգանակված 59 ր., որի համար հոգաբարձութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը նուիրատուներին։ Առանձնապէս շնորհակալութիւն ենք յայտնում Ջեմիլ-բէկ Նասիբբէկովին և Շիրին Զէյնալովին։

Ի դիմաց հոգաբարձութեան նախագահ՝
Ա. Տէր-Մարտիրոսեան
Անդամ-քարտուղար՝ Ս. Սահակեան

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀՄԱՅԵԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԻՄԱՔՍԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

—

Թիւրքահայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի նոյեմբերի 26 ի նիստին մէջ նկատողութեան է առնվել Հմայեակ եպիսկոպոսի ներկայացրած հետևեալ զեկուցումը և ընդունված նրա ստիպողութիւնը։ Առաջ ենք բերում ամբողջովին այդ զեկուցագիրը, որ ցոյց է տալիս թէ հայերի դրութիւնը Թիւրքիայում դեռ շատ հեռու է նախանձելի լինելէ։

«Ասկէ երկու տարի առաջ, անցեալ 1908 նոյեմբեր 14-ին. Ազգ. Ընդհանուր Ժողովիդ Ը-րդ նիստին առաջարկ մը ներկայացուցած էի, յայտնելով թէ Օսմ. երկիրներու մէջ անյիշատակ դարերէ ի վեր բնակեալ հայ ժողովուրդը՝ ամենէն նեղեալ ու հարստահարեալն է, և Համիտական շրջանին բիւրաւոր հայեր անխնայ մորթոտուած ու արիւնով երկիրը ողողուած է։

Ուստի առաջարկած էի թէ Օսմ. սահմանադրական այս նոր շրջանին՝ հայ ազգը ամենէն աւելի իրաւունք ունի իր աղեկեզ ձայնը բարձրացնել Օսմ. խորհրդարանի առջև և հայաբնակ երկիրներու բարենորոգմանց անմիջական պէտքը ներկայել յիշատակագրով մը։

Ազգ. Երեսփ. Ժողովդ իր հաւանութիւնը ընծայեց այս առաջարկիս և իր օրակարգը անցուց։

Անցան 3—4 ամիսներ և խնդիրը թաղուած մնաց իր օրակարգին մէջ։ Ուստի 1909 փետր. 27-ին, Ազգ. Ժողովիդ ԺԷ-րդ նիստին բարենորոգմանց յիշատակագրին խմբագրութեան և Օսմ. խորհրդարանին ներկայացնելու պէտքը կրկնեցի։

Այն ատեն մեր ազնիւ պաշտօնակիցներէն ոմանք, որ Օսմ. Խորհրդարանի պատգամաւորներէն էին, յայտարարեցին թէ խորհրդարանի թուրք անդամները «բարի տրամադրութիւններ ունին հայերուն նըկատմամբ», թէ՝ հայաբնակ երկիրներու բարենորոգմանց խնդրոյն համար քննիչ յանձնաժողով մը կազմուած է և քիչ օրէն պիտի մեկնին դէպի ներքին գաւառները և դեռ տասնհինգ օր մըն ալ համբերել պէտք է։

Սակայն չկրցի ես այդ խոստումներով օրօրուիլ և խնդրոյն կարևորութիւնն ու կենսականութիւնը նկատողութեան առնել, խնդ եցի։ Պատկառելի Ժողովդ 1909 մարտ 13 ի ԺԸ-րդ նիստին, ընդդէմ 8 քուէի 37 քուէով որոշեց յղել նախաքննիչ դիւանաց ատենապետներու Մայր Դիւանին հետ միանալով, մատուցանելի յիշատակագրին գլխաւոր գիծերը պատրաստել և ներկայել Ազգ. Ժողովիդ նկատառման։

Այս որոշումէն 18 օր ետք, ապրիլ 1—12 (1909) Կիլիկիոյ ահաւոր կոտորածը տեղի ունեցաւ և 20,000 անմեղ հայերու արիւնը հոսեց գնաց և հայ անմեղներ կախաղաններու վրայ ճօճացին և որոնց ընկերները դեռ Պօտրումի բանտերուն մէջ են, մինչդեռ բուն ոճրագործները ազատ համարձակ կը շրջին։

Բայց անշուշտ թէ՝ այս ամենը «բարի տրամադրութիւններու» արդիւնք չեն։

Եւ սակայն կը մտածեմ թէ՝ եթէ ժամանակին կանխած ըլլայինք Օսմ. Խորհրդարանին առջև ազգին ցաւերն ու չափաւոր պահանջումները ներկայել, արդեօք այն ատեն մեր Թիւրք հայրենակիցները հայերուն նկատմամբ այլ և այլ թիւր և սխալ գաղափարներ չվերագրելով պիտի խնայէին հայերը ջարդելէ—ո՞վ գիտէ, չեմ կարող ուրոշակի բան մը ըսել։

Եւ հիմա երկուքուկէս տարուան փորձերը ցոյց տուին, թէ «բարի տրամադրութիւնները» խօսք են եղեր միայն։ Խօսքեր կան, խոստումներ կան, բայց արդիւնքը շատ աննշան։

Ազգ. Երեսփ. պատկառելի Ժողովդ կը յիշէ թէ՝ քանիցս պատգամաւորութիւններու միջոցաւ դիմումներ եղան հին և նոր վարչապետներուն՝ Թէվֆիք, Քեամիլ, Հիւսէյին Հիլմի և Հակկը փաշաներուն և մինիստրներուն՝ դարման տանիլ հայոց վիճակին, պահպանել հայերու կեանքը, պատիւն ու ինչքը. հարիւրաւոր թագրիրներ գրուեցան, բայց այս ամեն դիմումները նշանակելի արդիւնք մը չունեցան։

Եւ հիմա ալ «Այլ առակ լսարուք»։ Վարչապետ Հակկը փաշա դահլիճին ընդհանուր քաղաքականութեան վրայ բացատրութիւններ տալու պահուն ըսեր է. «Արևելեան Անատօլուի մէջ աննախնթաց անդորրութիւն մը կը տիրէ... և ուշադրութիւնը խանգարող դէպքեր պատահին իսկ զարմանալի չէ, (մոռցեր է ըսել. «Սայէի Շահանէտէ ասայիշ պէր քէմալ տըր» և Գրիգոր էֆ. Զօհրապ իրաւամբ գլուխը ցնցելով ըսեր է. «Է՜, ալ վարժուեցանք էֆէնտիմ»։

Արդ, ոչ թէ վարչապետ Հակկը փաշային այս անգոյ, մութ և անկապ խօսքերուն համար, այլ մեր տառապեալ ազգին խորունկ վէրքերուն՝ դարման ճարելու և թէ Օսմ. սահմ. պետութեան ծառայութիւն մատուցանելու և գալիք պատահարներու առաջքը առնելու նպատակաւ մեր չափաւոր ու անկեղծ առաջարկները յիշատակագրով մը մատուցանելու ենք Օսմ. Խորհրդարանին և խնդրելու ենք.

1) Հանրային կեանքի, պատուոյ և ընչից ապահովութիւն։

2) Արդարութեան և հաւասարութեան սկզբանց գործադրութիւն։

3) Հողային սեփականութեանց արդար և օրինական կարգադրութիւն և հողագործ ժողովրդեան նիւթական օգնութիւն ու քաջալերութիւն։

4) Համիդական շրջանէն՝ կոտորած, աւեր, յափշտակութիւն, թալան կրած հայաբնակ գաւառներու հայ ժողովրդեան կառավարութեան յետնեալ տրոց շնորհումը։

5) Համիդիէ հեծելազօրքերու, այժմ «Թեթևազէն» անուանեալներու իսպառ բարձումը։

6) Քիւրդերու և այլ սպառազինեալ ցեղերու զէնքերու հաւաքումը, բառնալ նաև քիւրդերու «խաֆիրութեան» անունով բռնակալութեան պահանջքները։

7) Կիլիկիոյ աղէտեալներուն վնասուց հատուցումը և բաւականաչափ օգնութիւն 12,000-ի մօտ այրիներու և որբերու։

8) Զինուորական խնդրոյն կարգադրութիւնը՝ քրիստոնէից մասին։

9) Եկեղեցական-ազգապատկան կալուածներու որոշ կարգադրութիւն մը, «մահլիւլէ» զերծ մնալու համար։

10) Կրթական խնդիրը լուծել համաձայն պատրիարքարանաց առանձնաշնորհմանց։

11) Անչափահասներու իսլամացումին խնդիրը։

12) Վերջապէս հայաբնակ երկիրներու բարենորոգմանց խնդիրը։

Արդ, տեարք երեսփոխանք, դուք որ Թիւրքիոյ հայ ազգին ներկայացուցիչներն էք, հայ ազգին առ Օսմ. գահն և սահմանադրական կառավարութեան՝ ունեցած անկեղծ ու ամենահաւատարիմ ծառայութեան ու անկեղծ սահմանադրասիրութեան համաձայնութեամբ՝ երկրին բարենորոգմանց պէտք եղած առաջարկները անվեհեր կրնաք ներկայացնել Օսմ. խորհրդարանին, ինչ-որ նախաքննիչ դիւանները ատենապետները մայր դիւանին հետ միացեալ խորհած ու պատրաստած են, առաջին պատեհութեամբ և առանց յետաձգելու նկատողութեան առնել և կարևոր համարել սրբազգութեամբ՝ Ս. պատրիարքի և ամբողջ ժողովականացս կրկին հաստատել մատուցանել Օսմ. Խորհրդարանին նախագահին՝ յանուն ազգին։

Վստահ եմ թէ Օսմ. Խորհրդարանի հայ պատգամաւորները պիտի պաշտպանեն ազգին այս չափաւոր պահանջումները։

Սոյն խնդրանօք մնամ աղօթարար խոնարհ ծառայ

Հմայեակ եպ. Դիմաքսեան

Պէրա, 26 նոյեմբ.

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 20 դեկտեմբերի

Նախորդ թղթակցութեանս մէջ գրել էի մեծ աւազակապետ և աշխարահռչակ Րահիմ խանի, Ղարադաղ, իր սեփական գիւղը վերադարձը Ռուսաստանից։ Այլ ընդ այլոց տարաձայնութիւններ ու կարծիքներ շատ կան ժողովրդի մէջ։ Ասողներ կան, որ ներքին գործերի մինիստր Էյն-ուդ-Դօվլէն կամենում է իր մօտ հրաւիրել Րահիմին և կարևոր պաշտօն յանձնել նրան. կան հաստատ հաւատացողներ, որ Ատրպատականի նահանգապետը ինքնուրոյն քաղաքականութեամբ կամենում է սիրաշահել բոլորին, որ մնա իր տեղում կամ գայ Թաւրիզ, մինչև անգամ առանձին պատգամաւորներ են գնացել Ղարադաղ համոզելու նրան, որ հետևի Մուխբէր-ուս-Սալթանէի խորհուրդներին։ Միայն ճշմարիտն այն է, որ Րահիմ խանը խաբում է թէ մէկին և թէ միւսին. իսկ ինքը այս ու այն աւազակ ու ապստամբ ցեղերի հետ միաբանւում է, ուժեր է պատրաստում նոր աւարառութիւնների և կողոպուտների համար։ Այսպէս թէ այնպէս շատերի հաւատն այն է, որ Ատրպատականը, աւելի չափաւոր Ղարադաղը գտնվում են շփոթութիւնների և արիւնհեղութիւնների նախօրեակում։

Նոր չէ, որ Թաւրիզում գոյութիւն ունեն երկու հակամարտ կուսակցութիւններ՝ նահանգապետի ուզողներ և չուզողներ։ Այս օրերս չուզող կուսակցութիւնը առաւել լայն չափեր է ընդունել, հիմք ունենալով իրան մի քանի հանգամանք։ Կառավարութիւնը փորձել էր ջնջել այն միւսադամիերի կոչված թօշակները, որ տարիների ընթացքում տուել են, այսպէս ասած, Պարսկաստանի պարազիտները՝ ձրիակերները. սակայն Թաւրիզի անջումանը այդպիսին նկատողութեան առնելով այն, որ իսպառ ջնջելն անհնարին է, պատրաստել է մի ցուցակ որպէսզի սակաւ չափերով թօշակներ արվեն նոցից, և այս ցուցակը ներկայացրել է նահանգապետի ստորագրելուն, բայց վերջինս մերժել է այդ կատարել։ Դժգոհների երկրորդ պատճառն այն է, որ նահանգապետը պաշտպանութիւն է ցոյց տալիս Րահիմ խանին և ծածուկ բանակցութիւններ վարում նրա հետ։ Երրորդ կէտն այն է, որ Պարսկաստանի սահմանադրական կուսակցականները, ինչպէս նաև Թաւրիզի նոր-երիտասարդ պարսիկները պահանջում են, որ Էյն-ուդ-Դօվլէն հեռանայ պաշտօնից իբրև հակադեմոկրատ հակասահմանադրական, այն ինչ նահանգապետին համարում են արգելք իրանց պաշտօնին։ Եւ վերջապէս չորրորդ և յարաճուն համոզմունքը սահմանադրականների այն է, որ Մուխբէր-ուս-Սալթանէն կարող անձնաւորութիւն չէ և անխորհ կռապոռիսներով է կառավարում երկիրը, և Ատրպատականի անհանգիստ վիճակը վերագրում են նահանգապետի թուլութեանը։ Վերջինս պատահաների համար գիտակցութիւն քնալով մեծանում է նահանգապետի դէմ. և հեռու չէ, որ նոր խլրտումներ հանդէս գան, մանաւանդ առաջիկայ Մուհարրէմ ամսվայ ընթացքում, որը լաւագոյն առիթ է միշտ ֆանատիկոս բորբոքումների։

Քաղաքային վարչութիւնը միակն է, որ շարունակում է իր օգտակար գործունէութիւնը։ Հացագործներն ու ցորենատէրերը շատ ջանք ու նենգամտութիւն են գործ դնում հացը թանկացնելու, սակայն քաղ. վարչութիւնը առաջն առնում է ամեն կերպ։ Քաղաք մտնող բոլոր պաշարեղէնից մաքս էին առնում. այդ բանն արգելեց վարչութիւնը նկատողութեան առնելով ժողովրդի կրած ծանրութիւնը։ Ժողովուրդն առհասարակ գոհ է վարչութեան գործելակերպից։

Հ.

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են
Հայերէնից-ռուսերէն բառարան, Յ. Թումանեանի, գինը պօստի ծախքով 1 ր.
Ռուսերէնից հայերէն, Յ. Թումանեանի,
պօստի ծախքով գինը 1 ր.
Դիմել Тифлисъ, Книжн. магаз. «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
Կարելի է ուղարկել և պօստի մարկաներ. ցանկացողներին ուղարկվում է կազմած, ինչ գնանոց կամենում են։
(օ. մ.) 1446. 2—1

ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԴԷՊՔ
ԾԱԽՎՈՒՄ Է
ԵՐԿՈՒ ՏՈՒՆ
ԳՐԱՒ ՉԸ ԴՐՎԱԾ
Մուխրանեան փողոցի վրա, №№ 23 և 25, նոր կամուրջի մօտ
Այդ տների գների և այլ մանրամասնութիւնների համար դիմել հետևեալ հասցէով. С.-Петербургъ. Мойка 81, кв. 14. Кн. Багратіону.
(Հ. ու.) 1409. 3—3

ЛУЧШЕЕ СРЕДСТВО ОТЪ
РЕВМАТИЗМА
ИНФЛУЭНЦЫ И ПРОСТУДЫ
СУЩЕСТВУЕТЪ 40 ЛѢТЪ
ЯКОРНЫЙ ПЕНЬ-ЭКСПЕЛЛЕРЪ
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
ГЛАВНЫЙ СКЛАДЪ Ф.АД. РИХТЕРЪ и Ко
С ПЕТЕРБУРГЪ
НИКОЛАЕВСКАЯ УЛ. Д. №16
Ф.АД. РИХТЕРЪ и Ко

Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
(Հ.) 1346. 4—4

Լոյս տեսաւ
ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ
Լեռնականք-Ուրուագիծ
Փորձ կովկասեան ժողովուրդների համեմատական ազգագրութեան։
Գինը 50 կոպ.
Դիմել հեղինակին Шуша, Духовная Семинарія. (օ. մ.) 1423. 3—3

Բամալեանց Ս. դպրի
կազմած ԿՐՕՆԻ գրքերն ըստ ծր. գրի, նոր եղանակով. Ա. տարի՝ 15 կոպ., Բ. տարի՝ 20 կոպ., Գ. տարի՝ 35 կոպ.։ Կրօնի դասատուներին Ա. բաժանմունքում, ձեռնարկ ուսուցչի համար, 40 կոպ.։ Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին, ուր վաճառվում են հեղինակի մանկական գրքերը նոյնպէս։
Շուտով կը տպվեն ԿՐՕՆԻ գրքեր՝ Դ. տարի՝ «Մարգարէներ», Ե. տարի՝ «Յիսուսի կեանքը», Զ. տարի՝ «Առաքեալներ և Հայաստանի լուսաւորիչներ»։
(Կ-Հ-Հ.) 1442. 3—2

XX ԴԱՐԻ ՀՐԱՇՔ!!
ՁԵՌՔԻ ԱՊԱՐԱՏ
ԼՈՒՍԱՆԿԱՐ-ԱՄԵՐԻԿ. «ԿՈԼՈՒՄԲ»
[illegible] մի ձեռնարկ։ Չը հաւանած դէպքում փողն ամբողջովին վերադարձնում ենք։ Միլիոնաւոր շնորհակալ. Ռուսաստ. ամեն ծայրերից։ Հասցէն՝ г. ЛОДЗЬ, Торг. Дому ЛЬВА РУБАШКИНА. 354.
(Հ.) (B. 80805) 1216. 21—9

Պատասխանատու Ծառայողների Թիֆլիսի Բորսային Արտէլը
Առաջարկում է առևտրի բոլոր ճիւղերի պատասխանատու արտէլշչիկներ։
Համաձայն կան. § 2-ի յանձն է առնում ապրանքների և տնային իրերի ընդունելութիւն և առաքում։
Կատարում է զանազան հաստատութիւնների և մասնաւոր անձանց առևտրական յանձնարարութիւնները։
Ցիշեալ գործողութիւնները կատարում է Թիֆլիսում գոյութիւն ունեցող գներից պակաս։
Հաստատութիւնների, խոշոր ֆիրմաների և վստահելի մասնաւոր անձանց համար։
Արտէլը բոլոր ծախքերը (երկաթուղային, կայարանների ծառայողներին վճար և այլն) կատարում է արտէլի գումարներից, և յետոյ ստանում է պարբերաբար, նոյած գումարներին։
Բոլոր վնասների համար պատասխանատու է իր պահեստի դրամագլխով, որ գտնվում է Բորսային Կոմիտէտի տնօրէնութեան ներքոյ և բոլոր ուրիշ դրամագլուխներով։
Վարչութիւնը ընդունելութիւնը շարունակում է։
Նոր անդամները գրանցվում են Արմեանսկի բազար, տ. Վարկ. Ընկ. № 6, հեռախօս 342.
Վարչութիւն
1449. 3—1

Типографія „ЭКОНОМЪ", [illegible]-Банкская № 3.